



Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքը արտոնագրված է «Ատեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատմենել և տարածել նյուրը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առևտ նյուրը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

1945

Թ. ՄԱՆԴԱՏԱՆ

ՄԱՅԻՍՅԱՆ

ԱՊԱՏԱՄԲՈՒԹՅՈՒՆԸ




№ 1000

ՀՅՈՒԿՈՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՎՐՈՊԱՆ - 1929


61  
ed,  
and

**Թ. ՄԱՆԴԱԼՅԱՆ**



# ՄԱՅԻՍՅԱՆ ԱՊՈՏԱՄԱԲՈՒթՅՈՒՆԸ

15678  
A T 867X



ԳԵՂԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ—1929

ՊԵՏՐՈՎԻ ՅԵՐԿՐՈՐԴ ՏՄԱՐԱՆ  
ՅԵՐԵՎԱՆՈՒՄ

Պատ. № 579.

Հրամ. № 1000

ԶԵՐԱԿԵՊՎԱՐ № 2145 (բ)

Տիրամ 2000

## ՄԱՏԻՍՑԱՆ ԱՊԱՏԱՄԲՈՒԹՅՈՒՆԸ

Վարն եր դաշնակցական Հայաստանի գոյության իմաստը՝ ի՞նչպիսի սոցիալ-դասակարգային պատվերներ ելին հանձնված նրան:

Առաջին հերթին՝ դա դաշնակեց իմպերիալիզմի և հայ բուրժուազիայի նրա հետ կապված հատվածի պատվերն եր՝ պատնեշ հանդիսանալ բայլ-շեփմի գեմ և սպառնալիք՝ Տաճկաստանի գլխին:

Յերկրորդ հերթին՝ ոռւս հականեղափոխական բանակների ու նրանց ոժանդակող հայ բուրժուազիայի պատվերը՝ թուլացնել Վրաստանն ու Աղրբեջանը, ապահովել իրենց թիկունքը և դուրացնել Անդրկովկասի հետագա նվաճումը միացյալ բուրժուական Ռուսաստանի կողմից:

Յերրորդ հերթին՝ Անդրկովկասի հայ, գերազանցապես առևարական, բուրժուազիայի պատվերը՝ զբավել Տաճկաստանը, վերստին նվաճել անդրկովկասյան կորցրած շուկաները:

Այդ պատվերները կատարելու համար Դաշնակցությունը հենվում եր Հայաստանում սպեկուլյանտների, վաշխառուների, կուլակների ու խմբապետների վրա և ուրեմն կատարում մի չորրորդ պատվեր ևս՝ դուրսություն տալիս այդ տարրերին շահագործելու

Հայաստանի գլուղացիությունը, արնաքամ անելու յերկրի աշխատավոր մասսաներին, զլիսավորապես վոչ ռնեսական մեթոդների միջոցով:

Ճիշտ և, այդ պատվերները լիովին իրար չեյին համապատասխանում. նրանց մեջ կային հակասություններ և շատ լուրջ հակասություններ. որինակ՝ Անգլիան և Դենիկինը տարբեր վերաբերմունք ունեցին զեղի Վրաստանն ու Ազգը շահանը. Դենիկինին ոգոնելով հանգերձ՝ Անգլիան միջոցներ եր ձեռք առնում ապագա Ռուսաստանից Անգրկովկասը հեռու պահելու համար. Անգլիան ու Ամերիկան տարբեր քաղաքականություն եյին վարում Անգրկովկասում, մրցում եյին իրար զեմ և այլն, և այլն. Այս ամենը չեր կարող չանգրադառնալ Հայաստանի վրա. Սակայն եիմ Յական անդում անդու-Փրանսիական իմպերիալիզմի պատվերն եր վորոշողը. նրան եր յենթարկվում և ոպասավորում դաշնակցական Հայաստանը:

Թերթենք մի փոքր պատմական դոկումենտները:

1919 թվի ոգոստոսին Հայաստանի ներկայացուցիչը Թիֆլիսից հետեյալ հեռագիրն և ուղարկում Յերեան, Խատիսովին.

«Այսոր յերեկոյան ինձ ընդունեց գնդապետ Հասկելը: Հաճնի տպավորություն և թողնում. խոստացավ Հայաստանում կարգը վերականգնել: Պոլսից արգեն հեռագրել և Կլեմանսովին դաշնակից զորքերը Հայաստան մտցնելու անհրաժեշտության մասին, պատասխան չի ստացել: Հավանական և չորեքշաբթի, ոգոստոսի 20-ին ուղեկորվի Յերեան. ուղեկցում են նրան կինը և միքանի սպաներ. պետք և դիմավորել սահմանում, Ղարաքիլիսալում և Յերե-

վանում. պատրաստեցեք Սանահինում և ճանապարհին շոգեարժներ, դրեք Հասկելի վազոնում մի զուգ պահակներ լավ ղիսցիպլինայով և լավ հագնված։ Ռեկվիզիցիայի լենթարկեցեք Յերեանում մի բնակարան լողաբանով, վարձեցեք աղախին, նվիրաբերեցեք ծաղիկներ Ալեքսոլի և Յերեանի կայարաններում. կայարանում դրեք պատվավոր կարառ փողհարներով, նշանակեցեք կապի համար հատուկ մի սպա. զտնում եմ Յարլոկովին շատ կոմիլֆո...».

Հայաստանի «Վարչապետը» վարձում և աղախին գնդապետ Հասկելի համար։ Դժվար է յերեակալել մի ավելի վառ, թեև փոքր, իլլուստրացիա դաշնակցական Հայաստանի խայտառակ կախումին իմպերիալիզմից։

1920 թ. հունվարի 30-ին անգլիական գերազույն կոմիսար Ռուրդրոպի հետ ունեցած խորհրդակցության ժամանակ Հայաստանի մինիստրների խորհուրդը հայտնում է նրան, վոր Շեայ ժողովուրդը միտք որինենացիա վերցրած է յեղել զեպի զանակիցները յեվ նա կարող է ոգտակար լինել անզիփան կառավարությանը քե անեսապես յեվ քե բաղաքականապես։ Միաժամանակ նա խնդրում է ճնշում գործ դնել Աղրբեջանի վրա Ղարաբաղի հարցի շուրջը։ Միստը Ռուրդրոպի չոր ու սառն պատասխանն է յեղել, — Աղրբեջանը պայքարելու յերայլեկիզմի դեմ, և ուրեմն պետք է նրա հետ հաշու ապրել։

Նույն որը, Հայաստանի համալսարանի բացման հանդեսին, դաշնակցական մինիստր Նիկոլ Աղբալյանը հանդես է զալիս ստրկական մի ճառով, վորի մեջ ուղում է հիմնավորել Անտանտայի տնտեսական շահա-

գրգոված, իւշոնը Հայաստանում հետեւալ խոսքերով. —

«Մենք պեսք և արտազրենք իում նյուր, յեվ բող Շեվոպան մշակե այդ. Շեվ բանի ոռւկա լինենք իում նյուրի, միւս կլինենք բաղաբակիր պեսուրյունների հետ, յեվ այդ արդեն իսկ պատիվ և մեզ...»

Սա իեր Դաշնակցության տնտեսական ծրագրի մտքսիմումը՝ լինել մի համեստ գաղութ ոտար կապիտալի շահագործման համար, վոչնչով չտարբերվել այդ տեսակետից Հնդկաստանից, Յեզիրականից կամ աֆրիկական գաղութներից:

Սակայն այդ ծրագիրն իսկ անիրազործելի լեր, վորովնետե յեվրոպական կապիտալը մուրացիկ Հայաստանը չեր ել մտածում դիտել իրեն հում նյութի բազա, այլ սոսկ իրեն քաղաքական մի կղզի, վորտեղից կարելի յեր կազմակերպել դիմազրություն (թեկուղ և աննշան) իմպերիալիզմի տիրապետությանն Արևելքում սպառնացող վտանգի գեմ։ Դաշնակցական սոխակների գալայլյունը չեր կարու կոտրել անգլիական գեներալների սրախ սառուցը. նրանք գործնական մարզիկ ելին և զիտելին, թե ինչ են փնտում Հայաստանում։ Նրանք սոխակներին հրամցնում ելին ուազմամթերք ե, գնելով հանդերձ նրանց 1914 թվի սահմանների վանդակում ու արգելելով դուրս գալ այդ սահմաններից՝ հրահրում ելին նրանց ախորժակները, հրապուրում «անդիի» Հայաստանի հրաշալիքներով, վառ պահում այն կրակը, վոր 1920-ին հրդեհեց ու մոխիրների մեջ առավ յերկիրը։ Այդ մոխիրների մեջ այրվեցին սոխակների փետուրները և արդեն առանց խոշորացուցի կարելի լեր տեսնել, վոր

անգլիական վորսորդների սովորական բազհների մաս-  
սին եր խոսքը:

Ցեղ 1920 թվի նոյեմբերին նրանք արդեն «հում  
նյութի» մասին չելին խոսում: «Մենք ստիպված ենք  
խնդրել դաշնակիցներին, առաջին հերթին անգլիա-  
կան հրամանատարությանը, — հեռագրում եր հոկտեմ-  
բերի 31 ին Ռանջանյանը, — ողնության զալ մեզ մեր  
տրկում, վորն ընկել ե բալլնիկների ու քեմալիստ-  
ների ողակի մեջ»... Զենք ու նավթ եր աղերսում  
դաշնակցական կառավարությունը:

\* \* \*

Թեև ամերիկացի Հասկելը «խորհուրդ չեր տա-  
լիս» սերտ կազ ստեղծել Դենիկինի հետ և «վրացի-  
ների հետ իր հարաբերությունները չփչացնելու հա-  
մար»՝ ամերիկացիները նույնիսկ հրաժարվել եյին  
աջակցել Հայաստանից ոռուս սպիտակ բանակներին  
փամփուշտ ուղարկելու գործին, այնուամենալինիվ,  
քանի վոր Անգլիան ավելի մեծ ազգեցություն ուներ  
Հայաստանում, և ինքը Դաշնակցությունն ել հազարա-  
վոր թելերով կապված եր ոռուսական հականեղափոխու-  
թյան հետ, դաշնակցական կառավարությունը միշտ  
համարել ե իրեն Դենիկինի և Վրանգելի բանակների  
հավատարիմ գաօնակիցը:

Ի՞նարկե, նա չեր հանդինում հայտարարել այդ  
մասին ի լուր աշխարհի, բայց կարինետներում, գաղտ-  
նի խորհրդակցություններում յերկու «լիղբայրական»  
բուրժուազիաների ներկայացուցիչները ծրագրեր ելին  
մշակում բալլնիկմի դեմ պայքարելու մասին այն ժա-  
մանակ, յերբ Հայաստանում բալլնիկմը դեռ նոր եր իր  
ծիլիրն արձակում:

Հենց 1919 թվի սկզբներին դաշնակների համաձայնությամբ ու աջակցությամբ Կարսի թնդանոթները և առնասարակ սաղմամթերքն ուղարկվում և Դենիկինին, վորովինեան, ինչպես հայտարարում եր զեն. Միլնը Խատիսովին՝ «Դենիկինը պայքարում և բայց շերիկների դեմ, իսկ բայց նիկներին անզլիացիները համարում են և Հայաստանի լուրջ թշնամիներ»:

1919 թվի հոկտեմբերին Դենիկինը հատուկ հրամանով թուլաւարում եիր բանակի մեջ գտնվող հայերին անցնել Հայաստան՝ դաշնակցական բանակն ուժեղացնելու համար. Դաշնակցականները ձեռնարկում են այդ գործին, սակայն գանազան պատճառներով այդ չի հաջողվում նրանց: 1920 թվին պարտված ուսւսովիտակ բանակներն իրենց հանգրվանն են գտնում Հայաստանում, վորտեղ նրանց դաշնակներն ընդունում են գրկախառն:

Մինչև իրենց վերջին շունչը դաշնակցական կառավարությունը և սուսական հականեղավիխությունը շարունակում են իրար ոգնել սաղմամթերքով: 1920 թվի հոկտեմբերին Հայաստանի կառավարությունը հաստատում է Դրիմից մեկ միլիոն փամփուշտ ստանալը: Նույն ամսի 26-ին նրա ներկալացուցիչ Սաղաթելանը Սևաստոպոլից հեռագրում ե, վոր ինքը դիմել և կառավարության կողմից զեներալ Արա Գելին, և վերջինս կարգադրել ե առնվազն միլիոն փամփուշտ ևս ուղարկել... Յեզ դա կատարվում ե Պերեկոպի որերին:

Այս բոլոր փաստերը, վորոնց շարանը կարելի յեր շատ ու շատ լերկարացնել, մե՞ք բերեցինք՝ մի անդամ ևս հիշեցնելու համար, թե ինչպիսի միջազ-

դալին որիենտացիա ուներ հայ բուրժուազիան,  
նրա կուսակցությունն ու կառավարությունն իրակա-  
նում, քանի վոր դաշնակցական մամուլը, վորի եջե-  
րից իրենց քարողներն եյին կարգում աշխատավոր  
մասսաների կուսակցության ռեալ քաղաքականու-  
թյան համար մազի ծանրություն անգամ չունեցող  
մանր-բուրժուական վոսկերերանները, ուրիշ չերգեր  
եր յերգում, այնպես, ինչպես անում և բուրժուական  
մամուլը միշտ ու ամեն տեղ և հատկապես՝ գաղու-  
թացած լերկը կրկնակի պոռնիկ բուրժուազիայի  
կրկնակի պոռնիկ մամուլը:

Անցնենք դաշնակցական Հայաստանի ներքին  
գրությանը:

\*\*\*

«Դիշեր չի անցնում, վոր հարբած խմբեր դժո-  
խային աղմուկով, բոռալով ու զուռնայի խուլային ճի-  
չով չանցնեն փողոցներով... Յերբեմն կանգնում են փո-  
ղոցի մեջտեղը և կատաղի հարայի բոցով խմում, պա-  
րում ու հայնոյում, ինչքան ներում են ուժերը, թա-  
կելով տափն ու փչելով խուժաղուժ զուռնան: Յերբեմն  
լազաթի համար սկսում են ատրճանակ արձակել՝ սար-  
սափ գցելով հարեւան տներում ապրող կանանց ու յե-  
րեխաների սրտին... Մարդ մնում և զարմացած, վհրա-  
տեղից են Յերեւանում այսքան շատ քեֆեր անողներ  
և մվքեր են ալդ հարուստները, վոր ամեն գիշեր խը-  
մում են, ամեն որ հազարներ ծախսում, ու չի հատ-  
նում. մվքեր են հաճախորդներն այն զգվելի վորչերի,  
վորոնցով Յերեւանն ալնքան հարստացել և վերջերս»...

Այսպես եր գանգատվում մի ահարեկված քաղ-

քենի «Հառաջած»-ի 1920թ. հունվարի 3-ի համարում  
զետեղված մի հոդվածում՝ Յեղ նա միանգամալն ճիշտ  
և տալիս դաշնակցական Հայաստանի պատկերը. մի  
կողմից՝ փողոցներում կուտակվող ու նեխվող դիակ-  
ները, մյուս կողմից՝ տիրող խավերի վայրենի «խը-  
րախճանքը ժանտախտի տահին»: Քաղքենին չի համար-  
ձակվում ինքը պատասխանել այդ հարցերին, թե ով-  
քեր են այդ հարուստները: Դաշնակցական Հայաստանը  
հիշող ամեն վոք գիտե, թե ովքեր են յեղել. յեղել են  
սպեկուլյանեները, խմբապետներն ու մառգերիստ-  
ները:

Դաշնակ «պետականության» բուրգը շատ պարզ  
կառուցվածք ուներ, վերեսում՝ սակավաթիվ անզիւդական  
սպաների, հոյ «գործիչների» ու բարձրագիրք խմբա-  
պետների՝ միջազգային և հայկական բուրժուազիայի  
խառացրած կամքը կատարողների դասը, վորն իր հեր-  
թին անթիվ կապերով կապված եր դաշնակցական «մի-  
ջակի» հետ. «միջակը» քաղաքի առնարականն եր,  
դյուզի վաշխառուն, տղրուկն ու կուլակը, խմբապետ-  
ները և վորոշ չափով ել հոգեորականությունը \*): Դաշ-

\*.) Բնորոշ ե, վոր Դաշնակցության կազը հոգեորականու-  
թյան հետ ավելի ու ավելի քողամերկ եր հանդես դալիս 1920  
թվի ապրիլ ամսին պարլամենտը՝ չնայած միքանի դաշնակների  
«ընդդիմադրության», հրաժարվեց դպրոցներն աշխարհականացնե-  
լուց: Ահա թե ինչպես եր գնահատում Դաշնակցության յեկեղեցա-  
կան քաղաքականությունը պարզամենտում ես-եր Առնդկարյանը. —

«Ասում են, թե յեկեղեցին պետությունից բաժանված ե:  
Յես հայտարարում եմ, վոր այդպես չե. ընդհակառակը, հարաբե-  
րություններն ավելի մտերմացած են, քան նույնիսկ ոռուների  
ժամանակ եր. որինակ՝ հոգեոր կառավարություններն ու կոն-

նակցության պրետորյան գվարդիտն, նրա ռազմական  
ուժն ելին կազմում զլխավորապես տպադասակարգար-  
նացած տաճկահալերից ստեղծված խմբերը։ Կտրելով  
տաճկահալ գլուղացիության կուռրածներից ճողովրած  
մասսաները հողից ու աշխատանքից, լեցնելով նրան-  
ցով Ռուսահայաստանի քաղաքներն ու գյուղերը, ցա-  
րիզմն ու Դաշնակցությունը զրկել ելին նրանց և աշ-  
խատանքային հակումներից։ 5—6 տարվա թափառա-  
կան կյանքը կնքել եր իր զրոյմը գաղթական տաճ-  
կահայության խոշորագույն մասի վրա։ պակաս չել  
նպաստում նրա ապագասակարգայնացմանը և սոցիա-  
լական այլասերմանը և այն «նպաստային» քաղաքա-  
կանությունը, վոր վարում ելին հայ բուրժուազիան  
ու Դաշնակցությունը։ Շարունակ աշխատանքից ու ըզ-  
բաղմունքից զուրկ մնացած զաղթականները, վորոնց  
Դաշնակցությունը կերակրում եր մի կողմից նպաստ-  
ներով (ճիշտ ե, վողորմելի նպաստաներով), մլուս կող-  
մից «էերկիր» վերագառնալու յերազներով, պատրաս-  
տի հենարան ելին ներկայացնում Հայաստանի յուրա-  
հատուկ Փաշիզմի համար։

Այդ ամբողջ կառուցվածքն իր հիմքում ուներ  
Հայաստանի բանվորներին և գյուղացիներին, վորոնց  
անխնա ու գիշատիչ շահագործումը գերազույն պատ-  
գամն եր մառակերիզմի թագավորության։ Հայ բուրժու-

---

սիստորիաները, վորոնք ռուսական կառավարությունից վոչ մի ո-  
ժանդակություն չելին ստանում, այժմ հայկական պետության  
հաշվով են ապրում ...։

Տարբեր ձեռվ նույն միտքն եր արտահայտում և դաշնա-  
կցական Վ. Խորենին։

ազիան ու նրա կուսակցությունը \*) դիտելով «Յերեւ-  
պանյան հանրապետությունը» իրեն ժամանակավոր  
մի ոթեան, սկզբունք ելին գարձրել՝ վորքան կարելի

\*) Իզեղ, մի փոքր տարորինակ ե, վոր մայիսյան ապրո-  
տամբության մասին զրգած յերկու հիմնական աշխատություն-  
ների հեղինակները՝ ընկ. ընկ. Աղոստ Հովհաննիսյանը և Շ. Ամիր-  
խանյանը խռոսափում են Դաշնակցության սոցիալական եյու-  
թյանը պարզորոց զնահատական տալուց Վոչ ընկ. Ա. Հովհաննի-  
սյանի վորակումավ («ազգային քաղքենիության կուսակցություն»),  
վոչ ել ընկ. Շ. Ա.-ինով («ազգայնական ինտելիգենցիայի կու-  
սակցություն») կորող և մեր յերիտասարդությունը դեկավար-  
վել մեր հեղափոխական պատմությունն ուսումնասիրելիս նախ և  
առաջ այդ վորակումները, մեղմ տաճ, միքիչ անորոշ են: Վոչ  
քաղքենիությունը, վոչ ել ինտելիգենցիան ինքնուրուցին դասա-  
կարգային կասեգործեաներ չեն: Կարծում ենք, վոր այդ ապացու-  
ցելու կարիք չկա:

Դժվար ե համաձայնել ընկ. Շ. Ա.-ի թեղի հետ, թե Դաշ-  
նակցության սոցիալական եյության ընորոշումն անհրաժեշտ չե և  
նույնիսկ հնարավոր չե Մեկ թվում ե, վոր դա և կարենոր ե, և  
հնարավոր ե, միայն թե զբա համար պետք և աղատվել դաշնակների  
ցանոծ իլլյուզիաների կախարդական ցանցից, վորի մեջ գեռես  
թափալիքում են միքանի կոմմունիստաներ: Թողնել այս հարցում  
անորոշության ու յերկմտության հետք անգամ—կնշանակե պահ-  
պունել այն չարաբաստիկ կամուրջը, վորի վրայով մեր ընկերներից  
գոմանք սայթաքում են գետի ոպպորտյունից:

Եեկ իսկապես, յեթե «ազգային քաղքենիությունը» պայ-  
մանափորվենք հասկանալ իրեն մանր բուրժուազիա, ապա ազա-  
վագվում և մեր հեղափոխության զարգացման վողջ պատկերը.  
Դաշնակցությունը զառնում և խեղճ ու կրակ, խարված ու անճա-  
րակ գոն-քիշոտային կազմակերպություն, հակասական ու յերերուն  
գործելակերպով, հեղափոխության ու հականեղափոխության մեջ  
տատանվող: Թե ինչպիսի սկզբունքային սխալ ե այդ, մենք կտես-  
նենք հետազայւմ: մեր կրած պարտությունների պատճառների  
շարքում Դաշնակցության այդպիսի զնահատականը ևս իր տեղն  
և ունեցել:

և կարեն ժամանակամիջոցում վորքան կարելի յեւ օան  
քամել յերկիրը՝ հանձինս իր աշխատավորության:

Դաշնակցական Հայաստանի ընդհանուր ֆոնն եր՝  
թղթաղբամբ, սովը, համաճարակները, հարյուր՝ հազար-  
ների հասնող մերկ ու սոված գաղթականների առկա-  
յությունը, ազգամիջյան կոտորածներն ու կրիմսերը,  
ամերիկյան կաթն իրըև միակ միջթարանք, անսանձ  
չարշահությունը, անզուսպ կերուխումն իշխող դասե-  
րի, սիստեմի վերածված կամայականությունը:

Այդ ընդհանուր ֆոնի վրա յեր 1919 և 1920 թը-  
վերին աճում մասսաների անրավականությունն ու ա-  
պա զայրուկթը:

Սակայն տեսնենք, թե ինչ դրություն եյին ապ-  
րում այդ մասսաները «առ 1-ն հունվարի» 1920 թ.:

Թանգորեները Հայաստանում սակավաթիվ ելին.  
համարյա բոլոր արդյունաբերական ձեռնարկները փակ-  
վել ելին, բացի յերկաթուղուց, վորտեղ աշխատում  
ելին միքանի հազար բանվորներ (և վոչ թե միքա-  
նի հարյուր, ինչպես կարծում են վոմանք—միայն Ա-  
լեքպոլում 1920 թվին կար մոտ 1500 բանվոր): Նը-  
րանց խոշորագույն մասը կապված եր գյուղի հետ և  
յեթե մի կողմից արտացոլում եր գյուղի տրամադրու-  
թյունները քաղաքում, մյուս կողմից գյուղ եր ներմու-  
ծում բանվորական տրամադրությունները:

Աշխատանքի պայմանները ծանր ելին մանա-  
վանդ յերկաթուղում: Պրոֆմիությունը, վորի մեջ զե-  
կավար դեր եյին խաղում կուլտակներն ու սպեկուլա-  
ները, դաշնակցական կառավարության ճնշման ապակ-  
րատի կցորդն եր կազմում: Բանվորական որը յերկա-  
րացվում եր, բանվորներին մթերքները կանոնավոր

կերպով չեյին տրվում և սպեկուլյացիայի առարկա ելին գարձեր իսկ նրանք հսկայական աշխատանք ելին թափում յերկաթուղին վերաշինելու համար, չնայած դություն ունեցող խայտառակ պալմաններին։ Բանվորության մեծամասնությունը դժգոհ եր իր վիճակից, բայց գեռ հեռու յեր բարձրեիկյան տրամադրություններից և վորոշ իլլուզիաներ կապում եր Դաշնակցության հետ։

Միայն Բագվից յեկած բանվորներն եյին, վորթե յերկաթուղում, թե զլուզում տարածում եյին բայլշեիզմի սերմերը, ժողովրդականացնում Բագվի պրոլետարիտաեր հեղափոխական պայքարի հերոսական տրագիցիաները։ Բայց նրանք դեռևս փոքրամասնություննելին կազմում։

Գյուղացիուրյունն ուներ դժգոհության բազմաթիվ պատճառներ — սովը, հիվանդությունները, յերկրի անտեսական կազմալուծումը, արդյունաբերական ապրանքների բացակալությունը սահմանները փակվելու շնորհիվ, անվերջ ազգամիջյան ընդհարումները, վորոնք զյուղացիներին զնում եյին անապահով վիճակի միջ, աշխատավոր ձեռքի մորիլիզացիան։ Ապա՝ խմբապետների թալանն ու ասպատակությունները զյուղում, ձիերի ու լծկանի բռնագրավումը, խմբերի կերակրելը, անորինական տուրքերը և այլն։ Խմբապետի հետ միատեղ գյուղում անսահման իշխանություն ուներ և կուլակը, վորը անտեսական ծանր ճգնաժամային դրությունն ոգտագործելով՝ կուտակում եր իր ձեռքը սընանկացող զյուղացիների հողերը, հողինում շահագործման ավելի ու ավելի ալլանդակ ձեռք։ Դաշնակցական կառավարությունն ինքն ստեղծում եր յերկրում յու-

բահատուկ նոր կալվածատիրություն, բաժան' լով սրի անցկացրած թյուրք գյուղացիության հողերը պարլամենտի անդամներին ու խմբապետներին։ Վերջապես, գյուղացիության մի զգալի հատվածն ել, չխռանելով արշակն ազգային փոքրամասնությունների մնացորդների մասին, հալածվում եր իր կրօնական համոզմունքների պատճառով, ինչպես, որինակ՝ կաթոլիկ հայ գյուղացիությունը Քաֆթառլուի շրջանում (Ալեքպոլի գավառ)։

Թաճակը բաղկացած եր յերկու մասից՝ կանոնավոր և անկանոն. վերջինիս, այսինքն խմբերի մասին խռանել ենք արդեն. խմբերը լուրջ ռազմական ուժ չեն իին ներկայացնում իրենից և զուտ պարտիզանական փորձ ունենալով միայն, կարող ելին գործածվել բացառապես հետախուզական գործողություններում կամ «ներքին թշնամու» դեմ։ Կանոնավոր բանակը, վորը կազմված եր գյուղացիներից, և վորի քանակը հասնում եր 40,000 ի, վորոշ ռազմունակություն թեե ուներ, բայց այն չեզոքացվում եր շնորհիվ դաշնակ զինվորական սիստեմի և շնորհիվ այն անտանելի ներքին ռեժիմի, վոր հաստատվել եր բանակում. ծեծը, հայուանքը, սպաների բռնությունները պատվավոր տեղ եցին բռնում այդ ռեժիմում, Միաժամանակ, քանի ավելի յեր խորանում տնտեսական ճգնաժամը, քանի ավելի յեր ուռնանում ինքը բանակը գյուղացիության նորանոր բազմություններ կլանելով, այնքան ավելի անընդունակ եր դառնում նա վոչ միայն միացյալ ու անկախ Հայաստանը նվաճելու, այլև գյուղացիուն ունեցող Հայաստանը պաշտպանելու համար։

Զմոռանանք հիշատակել այս ամենի հետ միասին,

վոր կոմմունիստական կուսակցությունը Հայստան-  
նում սկսել եր աշխատել փաստորեն միայն 1919 թվի  
կեսերից և կազմակերպչորեն ընդգրկել եր դեռևս շատ  
փոքր թվով բանվորներ ու գլուղացիներ, այն ել խո-  
շոր տոկոսով՝ յեկվորներից:

\* \* \*

Հարց և ծագում, թե վճրն երլինելու կոմմունիս-  
տական կուսակցության հիմնական դիրքավորումը Հա-  
յաստանում: Ի՞նչ նաևատակներ եր հետապնդելու նաև  
Պարզ ե, վոր այս հարցերն զբաղեցրել են մեր կուսա-  
կցությանը: Յեկ սրանց շուրջն են սկավել այն խոշորա-  
գույն տարածայնությունները, վորոնք ծայր առան-  
ձայիսին և մայիսից հետո:

Մեր կուսակցության Հայստանի Կոմիտեի (ԿԸՌ-  
ճառ՝ Արմենկոմի) յեկավարության զրվածքն իրակա-  
նում հետևյալն եր. Հայստանն իմաստեալիզմի կող-  
մից շահագործվող գաղութային յերկիր ե, վորտեղ դա-  
սակարգային շերտավորում զեռ չի յերեռում. Հայստ-  
անում իշխում ե մանր-բուրժուական սի կուսակցու-  
թյուն, վորը կույր խաղալիք և դարձել իմաստեալիզ-  
մի ձեռքին: «Այդպիսի յերկըում միջազգային հեղա-  
փոխական կոմմունիստների գործելակերպը պետք ե  
գերազանցորեն հիմնված լինի վոչ թե կապիտալիստա-  
կան յերկըին հատուկ սոցիալական հակասություննե-  
րի, այլ այն «արտաքին» պայմանների վրա, վորոնց  
շնորհիվ Հայստանում ստեղծվել եր դժոխալին կա-  
ցություն: Կարճ՝ մեր քաղաքականությունը պիտի լի-  
ներ վոչ թե կապիտալիստական, այլ գաղութային յեր-

A T  
8678

Կրի կոմմունիստների քաղաքականություն \*) (ընդունված է հիդինակինն են): Խակ քանի վոր սոցիալական հակասությունները զատվում են «արտաքին» պայմաններից ու հակադրվում նրանց, բնականորեն պայքարը Դաշնակցության դեմ զատվում ե իմպերիալիզմի դեմ մզգող պայքարից և սկզբունքում աւրիթ բնություն ու ձեւ ընդունում:


«Հայաստանի բանվորներն ու զյուղացիները... պետք ե ըմբռուտանան արևմտյան արնախում, խարդախ ու նենգամիտ իմպերիալիստների դեմ», խակ ցիեթե Հայաստանի տառապող ժողովուրդն ուզում ե ունենալ, իրոք, աղատ յերկիր, սեփական հայրենիք, սրտին ու մտքին մոտ բնակավալը, նաև պետք ե վըճռականապես պահանջե հայկական իշխող դասակարգից և դաշնակցական կառավարությունից՝ հնազանդվել իր անտառան կամքին\*\*)...)»:

Փորձեր անել հակադրելու իմպերիալիզմի հայկական իշխող դասակարգը, այսինքն՝ բուրժուազիան, վոր տասնյակ տարիներ շարունակ սպասավորել եր նույն իմպերիալիզմին և յեղել նրա գործակատարը, կնշանակիր դեզորիենտացիայի լենթարկել մասսաները, ստեղծել իլլուզիաներ, իբր թե Դաշնակցությունը կարող ե «հնազանդվել ժողովրդի անտառան կամքին», իբր թե բոլոր չարիքները գալիս են դրսից, և նրանց դեմ դրսում ել պետք ե պայքարել:

Ցեվ իսկապես, մւը եր յելքը. սոցիալական հակասությունների վրա չհենվել և միենալու ժամանակ

\*) Ս. ԿԱՍԹԱՆ. — «Ձախության հիվանդությունը մեղանում», «Նոր Աշխարհ», 1922 թ. № 2.

\*\*) Ս. ԱՏԵՆՅԱՆ (Կասյան). — «Ո՞ւր ե յելքը», 1920 թ.:



Ըմբռստանսմի իմպերիալիզմի դեմ: Այսինքնու Պայքահրի փոխադրմբ անգլիական սովաների դեմ: բայց նրանցից միայն միքանիսն ելին Հայաստանում, ուրիշն մնում եր սպասել, վոր գրսից Խորհրդային Ռուսաստանն ու համաշխարհային հեղափոխությունը քշեն իմպերիալիստներին, դաշնակ իշխանությունը մեղադա և ստեղծվի խորհրդային իշխանություն: Իսկ թէնչ անել մինչ արդ, կազմակերպել, դաստիարակել մասսաները «մեսսիայի գալստյան» համար, պախարակել դաշնակների «հիմարությունները», «քրաղաքյողությունները» և այլն:

Պարզ ե, վոր այս տեսակետը վոչ մի առնչություն չուներ կուսակցական ճիշտ գծի հետ: Պայքարն իմպերիալիզմի դեմ վոչ միայն չեր բացառում, այլ պարունակում եր իր մեջ պատքարը դաշնակիզմի դեմ: Մեկն առանց մյուսի անկարելի յեր, ավելին՝ պատքարն իմպերիալիզմի դեմ կարող եր հաջողություն ունենալ Հայաստանում միայն այն չափով, ինչ չափով վոր հարվածվում եր նրա արբանյակը՝ Դաշնակցությունը: Հայաստանի ժողովրդի ազատագրումը հնարավոր եր միայն բանվորազգուղացիական մասսաների գասակարգային պայքարով ընդում իմպերիալիզմին ստրկացած բուրժուազիայի \*):

Արմենկոմի զեկավար ընկերների այս սխալը բղխում եր յերկրի ներսում ծավալվող դասակարգա-

\* ) Մի այլ ծայրահեղության մեջ եյին ընկնում Ալեքսանդրի ընկերներից վոճանը, գերազնահամելով դասակարգային պայքարի ծավալման թափը և սոցիալական շերտավորման աստիճանը Հայաստանում և, ինչպես հետո կտեսնենք, սխալ տակտիկան յեղակացություններ հանում:

լին պալքարի թիրագնահատությունից։ Հայաստանը պատկերանում եր նրանց իրբե մի միատարր, հավանարապես աղքատ ու թալանված գյուղացիական յերկիր, վորտեղ կարծես դասակարգերը չկային, ու թափառում ելին միայն նրանց ստվերները։

«Համարձակ կարող ենք ասել, վոր Հայաստանի գյուղացիության մեծագույն մասը՝ 95 տոկոսը կազմը-ված և չունիմներից։ Ուրեմն Հայաստանը վոչ միայն զուտ գյուղաճնեսական յերկիր ե, այլ յեզ մանր ու աղբած գյուղացիական օճախուրյունների յերկիր՝ զուրկ գասակարգային խոր անօտագոնիզմից։» «Պատերազմը հիմնական փոփոխություն չի մտցըել մեր հասարակության դասակարգերի թվական հարաբերության մեջ, վոչ ել խորացըել և նրանց բաժանող հորիզոնական գծերը։ Այնպիսի յերեսութներ, ինչպիսիք են հարստության ակկումուլյացիան՝ կուտակումն ու հարստության կորսնցումը, վոր սովորական են համարվում կապիտալիստական յերկրներում, տեղի չեն ունեցել մեր յերկրում»... Դաշնակցության տիրապետության որերին «աշխատավոր գյուղացին քալքալվում եր, իսկ կուլակը ձգտում եր պահպանել իր կայունությունը\*»)...

Այս կոնցեպցիան, վորն «ազգային միասնականության» գաղափարների անուղղակի արտացոլումն ե, միանգամայն շրջում և իրերի խսկական պատկերը։ Պատերազմը և տարի խռովում և Հայաստանը, ուսղմանակատը հիմնահատակ քանդում և հին նիստու-

\*.) Ս. ԿԱՍԹԱՆ. — «Հայաստանի տնտ.-դաս» ստրուկտուրան», «Նոր Աշխարհ» № 1.

կացը, բյուրավոր մանր տնտեսություններ, զրկվելով  
աշխատող ձեռքերից, աղքատանում են, զինվորական  
պատվերների և ուղմաճակատին մթերքներ հայթայ-  
թելու գործով զբաղված են տասնյակ հաղարավոր մար-  
դիկ, բուսնում են ու չքանում են հսկայական հուրս-  
տություններ, սահմանամերձ շրջանները գառնում են  
կուտակման անսպառ շտեմարաններ արշինի ու կշեռ-  
քի ասպետների համար, և, յերեակայեցեք, զարմա-  
նալի համառությամբ չեն խորանում զասակարգերը  
բաժանող «հորիզոնական գծերը»... Կարծես, առևտրա-  
կան կապիտալը զարգարեցրել եր իր քայլայիշ աշ-  
խատանքը՝ համակված «ազգովին հայրենիքին ծառա-  
յելու» տենչով...

Փաստերն այլ են ասում. զասակարգային, սո-  
ցիալական հակասությունները սրվում ելին պատե-  
րազմի ժամանակ անհամեմատ ավելի արագ թռփով,  
քան անցյալում: Նույնը պետք է ասել և դաշնակցա-  
կանների տիրապետության շրջանի մասին: Փաստե-  
րը չեն ապացուցում, վոր «կուլակը ձգտում եր լոկ  
պահպանելու իր կայունությունը», կամ վոր աղքա-  
րնակությունը 100 տոկոսով եր յենթարկվում խմբա-  
պետների թալանին. ընդհակառակը, վորքան ել ծանր  
տնտեսական պայմաններում լիներ յերկիրը, կուլակը  
չեր կարող չաճել ու չուռճանալ ի հաշիվ չքավոր ու  
միջակ գյուղացու, քանի վոր նա յեր դաշնակ պետու-  
թյան հենարանը և հաղորդիչը գյուղում—կուլակին  
չեր թալանում խմբապետը, այլ նրանք յերկուսը միա-  
սին թալանում ելին աշխատավոր գյուղացուն, մեկն՝  
ուղղակի, մյուսն՝ անուղղակի կերպով: Իհարկե, քա-  
ցարձակ կոտորածների ու տեղահանությունների դեպ-

քում տուժում եր և կուլակը, սակայն դա չեր խանդարում սոցիալական շերտավորման խորացմանը գոյություն ունեցող գյուղերում:

Կուլակը կանգնած եր աշխատավոր գյուղացու դեմ և վոչ թե նրա կողքին:

Անտես առնելով այս ամենը, անտես առնելով դասակարգակին պատքարի ծավալումը զյուղում կուլակի, վաշխառուի ու խմբապետների դեմ, մեր ընկերներից վոմանք անտես եին առնում և այդ յերրորդությունը զլխավորող Դաշնակցության դեմ պատքարելու անհրաժեշտությունը և լարում իրենց աղեղները ճիշտ այնպես, ինչպես Վիլհելմ Թելլը, դաշնակ պետության զլխին դրած խնձորի, միմիայն ու միմիայն «վողջ հայ ազգը» պառապերացնող իմպերիալիզմի դեմ, առանց իմպերիալիստական տիրապետության պատվանդանին զիազէլու:

\* \*

Հայաստանի դասակարգային հարաբերությունների խնդրում ոպպորտյունիստական տեսակետի վրա յե կանգնում և ընկ. Ա. Հովհաննիսյանը մայիսյան ապստամբության գնահատականը տալիս: «Բանվորական, զինվորական և գյուղացիական լայն մի շարժում եր մայիսյան ապստամբությունը, վոր բռնկեց Հայաստանի տարբեր վայրերում: Մը մեջ եր ապստամբության ուժը, բայց և սրա մեջ եր նրա թուլությունն ու պարտության հիմնական պատճառը: Զկարքանակով և վորակով ուժեղ բանվորություն, վոր անցնելով մասսայական այդ շարժման առաջին շարքերը, իր գործողություններով կարողանար գույն և

Աւզդություն առ Նըանք... Ուրիշ խոսքով՝ կուսակցության բոլոր ջանքերը կմնային առաջդրուն, չեղոր ամենաճիշտ, ամենահետեւղական գիծն անդամները ավելացնի մեր բանվորների քանակը, հետեւապես ամեն մի ապատամբություն գաշնակցական Հայաստանում անմտություն եր\*):

Ընկ. Ա. Հովհաննիսյանի այդ սխալը գատապարտելով, ընկ. Շ. Ամիրխանյանը գործում և մի ուրիշ սխալը նա ընդունում և ընկ. Ա. Հ.-ի թեղը մեր բանվորության քանակական և վորակական թուլության մասին, բայց չի ուզում այդ թեղից բղխեցրած ոպպորտյունիստական լեզրակացությունների հետ հաշտվել և անխուսափելիորեն ծագող ալն հարցին, թե վժրտեղ և ուրեմն հեղափոխության (իսկ հեղափոխությունը փաստ և, այն փաստերից, վորոնք համառորեն ստիպում են իրենց գոյության հետ հաշտվել) զեկավար շարժիչ ուժը Հայաստանում—նա պատաս-

\*). Ա. Հովհաննիսյանին ոգնության և գալիս Հ. Դուրգերյանը, վորը մի շարք չափազանց խորիմաստ զատողություններից հետո, վորոնք պատիվ կրերելին Կողմա Պըուտկովին, զարդացնելով ընկ. Ա. Հ.-ի միտքը, հայտաբարում և, վոր ապստամբության համար անհրաժեշտ որյեկտիվ պայմանները հայստանում գեռամբողջովին չելին հասունացել, և յեթև նույնիսկ ապստամբությունը հաջող յելք ունենար, «միենույն և պահպանել մեր ձեռքում իշխանությունը մենք չելինք կարող, չնորհիվ գլխավորապես յերկրի տնտեսական ծանր պայմաններին»: Մի կողմ թողնելով խնդրի եռորդական կողմը, վորը պահան կարեռություն չւնի, բավարպէնք միայն առանագրելով, վոր Դուրգերյանի յելութը հիշեցնում և աշուղ Զեկավանու յերկտողը.—

«Աթլուր քարոզչի պատմումտն հագած  
Ասպարեզ և յելել  
Խելքի աչեցեք...»:

խանում ե, վոր այդ ուժը հենց ինքը գյուղացիությունն էր, քանի վոր տրանակում և նույնիսկ մասսամբ լերկաթուղազգծում ապստամբվել էր նույն գյուղացին»\*): Միանդամայն ճիշտ կերպով մատնանշելով, վոր «իրավացի կլիներ և անկասկած կհաղթեր այն կոմմունիստը, վոր չսահմանափակվելով և չբավարպվելով սակավաթթիվ բանվորական շրջանակով, կդնար գյուղը և կմտներ բանակ ու այնուհետ կկազմակերպեր և կոդտագործեր դոլություն ունեցող հեղափոխական նյութը՝ իր առջև գրված անմիջական մարտական խնդիրներն իրագործելու համար»... ընկ. Շ. Ամբելիսանյանը բացասում ե այն միտքը, վոր Հայաստանում ըրանվոր դասակարգն որյեկտիվորեն հանդիսանում եր հեղափոխական շարժման ղեկավար շարժիչ ուժը, առաջապահը և վորնաշարը», և թերահավատությամբ հարց ե տալիս. «Կարո՞ղ ե արդյոք բանվոր դասակարգը մեր կուսակցությանը տալ այնքան ուժ ու լեռանդ, վորպեսզի կարելի լիներ ընդգրկել հեղափոխական շարժումը և վարել հեղափոխական պետությունն այն ժամանակ, լեռը նա փաստապես չկարողացավ իր ձեռքը զցել և իրականացնել թեկրուզ միքանի որով այն հեղափոխական իշխանությունը, վոր այնպես անողնական կերպով ընկած եր Ալեքպոլի փողոցներում»... Հետեւապես, ասում ե ընկ. Շ. Ա.-ն, «ապստամբությանը մենք պետք ե մոտենալինք այլ ուղիով», այսինքն՝ իբրև գյուղացիական ապստամբության, վորը ղեկավարում եր Խորհրդավին Ռուսաս-

\*.) Շ. ԱՄԻՒԹԵԱՆՑԱՆ—: Մայիսյան ապստամբությունը Հայաստանում», յեր. 161:

տանի և Բագվի բանվորությունն ի դեմս դրսից լինած կոմմունիստ ընկերների:

Անմտություն կլիներ ժխտել զյուղացիական շարժման տեղն ու դերը Հայաստանում կամ ոռուական պրոլետարիատի զեկավարությունը, վորը վերջին հաշվով իր արտահայտությունն եր զտնում և մեզ մոտ: Սակայն չի կարելի կորցնել միջին ողակը, Հայաստանի բանվորությունը, վորի միջոցով եր այդ զեկավարությունն իրավորձվում, և վորը հանգիստանում եր մեր հեղափոխության հեղեմոնը:

Ասել, թե ռոեալիբականության պայմանները Հայաստանում կալանում ելին նրանում, վոր հեղափոխական ժողովրդական շարժմամբ բռնված փոքրիկ զյուղացիական յիրկում հենց միայն մառեկերիստները, կատաղի սպեկուլանտները, մաքսանենդները և այլ տիպի ապադասակարգացնացած տարրերն անհամեմատ ավելի շատ եյին, քան պրոլետարական տարրերը\*), կնշանակի մեքենայորեն մոտենալ խնդրին: Թվաբանական կանոնները դասակարգացին պայքարի համար պարտադիր չեն. նաև անհամեմատ ավելի բարդ մի պրոցես ե, վորտեղ կարեորը վոչ թե մառեկերիստների թվական գերակշռությունն ե պրոլետարիատի համեմատությամբ կամ ընդհակառակը, այլ այն, թե ինչ չափով այդ պրոլետարիատը կազմակերպված ե, դասակարգային գիտակցության վոր աստիճանին և հասել ե, ամենակարեորն ե, ի՞նչ չափով կարողացել ե նա գյուղի աշխատավորության հոծ զանգվածները իր

\*). Շ. Ա.—«Մայիսյան ապստամբությունը Հայաստանում», յերես 153:

զադափարական լեվ կազմակերպչական ազգեցու-  
թյան շրջանակի մեջ առնել:

Վորքան ել թույլ լիներ մեր պրոլետարիատը,  
այնուամենայնիվ միայն նա լեր, վոր կարող եր հե-  
ղափոխական շարժման ղեկավար հանդիսանալ «Թրսի»,  
այսինքն կարմիր բանակի ոգնությունը միայն դյու-  
րացնում եր մեր պրոլետարիատի պարագարը և վոչ մի  
դեպքում չեր հակադրվում կամ բացասում նրան: Իսկ  
զյուղացիական շարժումները, գրկվելով պրոլետար-  
կան շաղախից, անխուսափելիորեն պարտիզանական  
տարերային պոոթկումների պիտի վերածվեյին ու  
պարտվեյին, ինչպես ցուց տվեց արդ մայիսը:

\* \* \*

Քիչ առաջ մենք վերցրինք դրությունը դաշնա-  
կցական Հայաստանում «առ 1-ն հունվարի 1920 թ.»  
այն պարզ պատճառով, վոր հունվարին եր հրավիր-  
վել մեր կուսակցության կոնֆերենցիան, վորտեղ ծեծ-  
վել ելին հիմնական տակտիկական խնդիրները, և հուն-  
վարից ե, վոր հեղափոխական շարժումը Հայաստանում  
մտնում ե մի նոր շրջան:

Հիմնական վիճելի խնդիրը կոնֆերենցիայում  
զինված ապստամբության հարցն եր, վոր դրել ելին  
Ալեքպոլի ընկերները: Յեթե Արմենկոմն անտես եր  
առնում իշխանության համար պարագար մղելու ան-  
հրաժեշտությունը, Ալեքպոլի ընկերները՝ ճիշտ կեր-  
պով ըմբռնելով մեր կուսակցության դերն ու անելիք-  
ները Հայաստանում, պահանջում ելին ծայր տալ պայ-  
քարին դաշնակցական կառավարության դիմ: Սական  
մի կողմից Արմենկոմի ղեկավարությունը բացարձա-

կապես դեմ եր ապստամբության լոգունգին, իսկ նրան  
հակագրելով ազիտացիոն պըռոպագանդիստական աշխա-  
տանքը, մյուս կողմից Ալեքպոլի ընկերներն առաջին  
պլանումն ելին դնում ապստամբության լոգունգը:

Ալեքպոլի ընկերների յելակետն այն եր, վոր Հա-  
յաստանն արգեն հասունացել ե խորհրդայնացման հա-  
մար, «ամբողջ ժողովուրդը մեզ հետ ե»: Մասսաների  
հեղափոխականացման թափի այս գերազնահատումը  
(տարրորինակ ե, վոր ընկ. Շ. Ամիրխանյանը ևս հա-  
մաձայնվում ե այս կետում Ալեքպոլի ընկերների հետ)  
նվազ վտանգավոր չեր, քան Ամերկոմի բացարձակ  
ողպորայունիստական դիրքավորումը: «Հայաստանի ամ-  
բողջ ժողովուրդը» հունվարին դեռ մեզ հետ չեր, բան-  
վորության միայն մի սահմանափակ մասն եր կոմ-  
մունիստական կուսակցության ազգեցության տակ,  
չքավոր գյուղացիությունը բնազդորեն համակրելով  
իսկ մեզ, զեռ իր մեծամասնությամբ շատ ազոտ պատ-  
կերացում ուներ կոմմունիստական լոգունգների մա-  
սին. միջակ զյուղացին խորշում եր զեռ մեզանից և  
վերջնականապես չեր լքել Դաշնակցության հետ կապ-  
ված իր հույսերը: Նման պայմաններում անմիջական  
ապստամբության լոգունգը համազոր եր պուտչիզմի  
ու ավանդուրիզմի:

Սակայն, այնուամենայնիվ, մասսաները շարժվուն  
ելին գեղի ձախ: Տիրող գասակարգն ավելի ու ավելի  
պարզորոշ կերպով հակադրվում եր մասսաներին: Հե-  
ղափոխական հուանկարների առաջ եր կանգնած կու-  
սակցությունը, Հյուսիսից մոտենում եյին Անդրկով-  
կասի Կարմիր բանակները: Այդ պայմաններում կու-  
սակցության միակ ճիշտ գիծը կարող եր լինել՝ կուրս

վերցնել գեղի դաշնակ կառավարության տապալումը  
և իշխանության գրավումը զինված ապստամբության  
միջոցով, միաժամանակ լարված առորյա աշխատան-  
քով բաղաբականութեն յեզ կազմակերպչութեն նախա-  
պատրասել այդ ապստամբությունը, Հակադրել կու-  
սակցության առորյա ագիտացիոն-դաստիարակչական  
աշխատանքը զինված ապստամբության նախապատ-  
րաստմանը, ինչպես և հակադրել վերջինս առաջինին՝  
հավասարապես սխալ կլիներ. առորյա աշխատանքը  
պետք և յենքարկվեր իշխանության համար մզվող պայ-  
քարին:

Ուրեմն պետք և աշխուժացնել աշխատանքը գյու-  
ղում և մանավանդ բանակում, վորովհետև ովչի մտա-  
ծում հակառակորդի բանակը կազմալուծելու մասին,  
նա չի կարող պրոլետարիատի հեղափոխական պատքարը  
հաջողությամբ տանել:

Կոնֆերենցիան վերջացավ կոմպրոմիսով. Ար-  
մենկոմը զիջեց զինված ապստամբության խնդրում,  
հաշտվելով նրա անհրաժեշտության հետ այն գեղքե-  
րում, յերբ «նախ» յեթե դաշնակ կառավարությունը  
հանդգնություն ունենաւ Անտանտայի թելադրանքով և  
մենշևիկյան Վրաստանի հետ միասին ոգնելու մուսա-  
վաթական կառավարությանը խոչընդունակ հանդիսանալու  
կարմիր բանակին՝ Բագուն հարկադրանքով զրավելու  
գեղքում, յերկրորդ՝ յեթե նա Աղբբեջանի կամ Վրաս-  
տանի բանվորա-գյուղացիական ապստամբությանը  
թիկունքից իսանգարել ուղենա»\*), Զիսոսելով այն մա-  
սին, վոր ապստամբության նախապայմանները շատ

\*.) Ս. ԿԱՍԹԱՆ.—«Նոր Աշխարհ», № 2. «Զախության հի-  
վանդությունը մեղանում»:

անորոշ ու տարորինակ են ձետկերպվել՝ պետք ե շեշտել,  
սակայն, վոր ընդունելով զինված ապստամբության ան-  
հրաժեշտությունը թեկուղ 10 տոկոսով, Արմենկոմը  
պարտավոր եր ձեռնարկել այդ ապստամբության նախա-  
պատրաստմանը, վորովհետեւ առանց վերջինիս «սկզբ-  
րունքորեն» ապստամբության անհրաժեշտությունն  
ընդունելը մի հանցավոր գատարկախոսություն եր  
դառնում և սպառնում ծանր հետեանքներով:

Հետագա զեպքերը յեկան ասելու, վոր ձեականո-  
րեն ընդունելով ապստամբության եվենտուել հնարա-  
վորությունը, Արմենկոմը մինչև մայիս շարունակում  
եր իր հին զիծը: Յեթե հունվարին նա զեռևս իրավա-  
ցի լիր, առարկելով անմիջական ապստամբության լո-  
գունգի դեմ, ապա այն հանգամանքը, վոր նա միքա-  
նի ամիս շարունակ մնում եր իր տակտիկական հին  
դիրքերում, չնայած վոր զեպքերն արագորեն փոխում  
ելին դասակարգային ուժերի փոխհարաբերությունը,  
ավելի ու ավելի խորն եր թաղում նրան ոպպորտյու-  
նիստական ճահճի մեջ: Զինված ապստամբությունը չեր  
պատրաստվում վոչ քաղաքականորեն, վոչ ել ուղմա-  
կան տեսակետից:

Այն զեկավարությունը, վոր հեղափոխական ստրա-  
տեգիայի, տակտիկայի խնդիրները դիտում ե վերա-  
ցականորեն, առանց դասակարգային պայքարի ան-  
ընդհատ փոփոխվող ու բարգացող պայմաններին հա-  
մաձայնեցնելու, յելնելով միայն իր ընդհանուր, «տե-  
սական», բոլոր ժամանակների համար կիրարկվող  
«սկզբունքներից» (վորոնք, իդեպ, ինչպես մենք տե-  
սանք, այնքան ել սերտ չելին կապվում կոմմունիս-  
տական լենինյան դիրքավորման հետ), չի կարող տա-

նել պըոլետարական հեղափոխությունը դեպի հաղթանակ։

\* \* \*

Ի՞նչ կատարվեց հունվարից մինչև մայիս։

Նախ և առաջ ծավալվեց բանվորական շարժումը Հայաստանում և հատկապես յերկաթուղագծում։ Բանվորությունն ակտիվանում եր, հետզհետե գալով դասակարգացին գիտակցության։

Հունվարի 2-ին Ալեքպոյի դեպոյի պրոֆմիության ներկայացուցիչները քաղցած բանվորներին բավարարելու համար գնում են ու վերցնում սպեկուլանտներից այն հացը, վոր դաշնակցական պարենավորման կոմիտեն խելել եր բանվորներից և ծախել նրանց։ Յերկուսը բանտարկվում են։ զեպոն դիմում ե կայարան՝ խնդրելով ազատել բանտարկված ընկերներին, բայց նրան դիմավորում են մտրակները և մառուզերները։ Բանվորներից շատերը ծեծվում են, մի 20 հոգի բանտարկվում են, սրանց թվում նայեվ զաօնակցական բանվորներ։ Իրենց կաշվի վրա սկսում են զգալ բանվորները դաշնակ տիրապետության ելությունը։ Բագվից ու Թիֆլիսից յեկած բայլշեիկները նվաճում են բանվորների համակրանքը։ Դեպոյի յերեք կոմմունիստական բջիջները հետզհետե ընդդրկում են բոլոր քիչ թե շատ գիտակից բանվորներին և, վոր կարեորն ե, կոմմունիստական կուսակցության շարքերն են մըտնում տեղացի և գյուղի հետ կապված բանվորները ևս։ Այն մեկուսացած դրությունը, վոր կար առաջ դրսից յեկած բանվորների համար, վերանում ե։

Մարտի 28-ին բացվում ե յերկաթուղարկինների

համագումարը, վորը տեսում և քսան որ: Զնայած վոր դաշնակները կեղծել ելին մանդատները՝ կոմմունիստական Փրակցիան ուներ 16 պատգամավոր՝ 35 դաշնակցականների և նրանց կողմանակիցների դիմաց\*): Այդ քսան որը մի կատարյալ քաղաքական զարրոց ելին յերկաթուղու բանվորության համար, վորովհետեւ որակարգի յուրաքանչչուր հարցը պատգամավորներն ողտագործում ելին դաշնակցական խշանությունը վարկարեկելու, խարազանելու համար:

Ապրիլին դրությունը յեկաթուղում այն աստիճան եր սրվել, վոր պրոֆմիությունը փաստորեն բաժանվել եր յերկու մասի՝ կարմիր—դեպոյի գլխավորությամբ և գեղին՝ դաշնակցական: Մեր ազգեցությունն սկսել եր տարածվել բանվորության ամենահետամնաց խավի՝ զծի սպասավորության բանվորների վրա, վորոնք հարցուր տոկոսով կապված ելին դյուղի հետ: Ազստամբությունից մի շաբաթ առաջ հրավիրված Ալեքպոյի յերկաթուղաբինների կոնֆերենցիան պարզեց, վոր կարմիր միության գրոշակի տակ եր անցել արդեն բանվորության ճնշող մեծամասնությունը: Սուր կերպով դրվել եր քաղաքական գործադուլի հարցը՝ դեղին միությունը խորտակելու նպատակով:

**Յերեանի ու Ալեքպոյի քաղաքի բանվորները նույն-**

\*). Ընկ. Ա. Հովհանիսյանը կարծում է, թե յերկաթուղային համագումարն անցել է մեր ազգեցության տակ: Դասիալ եւ Միայն մի յերկու յերկրորդական հարցի առթիվ մեզ հաջողվել է ճեղք առաջացնել դաշնակների հետեւղների մեջ և մեր բանաձերն անցկացնել: Ավելին անհնարին եր անել այն տերերի պայմաններում, վոր տիրում եր համագումարում:

պես արագորեն համակվում եյին հեղափոխական տրամադրություններով:

Գյուղացիության համար վճռական նշանակություն ուներ տնտեսական ճգնաժամը՝ վորն ավելի ու ավելի էիր խորանում: Ապրանքային սովոր ուժիղանում եր, սերմացու չկար, իեղածն ել զաշնակցական «լիազորների ձեռքով անցնելով՝ շենացնում եր կուլակների շտեմարանները և անձնատուր անում նրանց քմահաճույքներին վոչ միայն չքավոր, ալև միջակ գյուղացուն: Մի շարք շրջաններում՝ Նոր-Բայալեալեառում, Ղարաքիլիսալրում, Զանգեզուրում կուտակված աշխատավոր ձեռքերը, վորոնք նորմալ պայմաններում ուղղված եյին գեպի Բագու, Թիֆլիս և այլն, մնացել ելին պարապ: Մինչ այդ հողն արագորեն կենտրոնացվում եր կուլակների, վաշխառուների, խմբապետների, դաշնակցական «ազգային գործիչների» ձեռքին:

Ազգամիջան ընդհարութմները չեյին դադարում: Յերկրի ներսում Դաշնակցությունը շարունակում եր «մաքրել» թյուրքերին, խմբերն ավերում ու թալանում եյին Աղբարայի, Զարիշատի, Բեյուք-Վեղու, Շարուրի թյուրք գյուղերը, բնաջնջում ազգարնակությունը: Հարեան գյուղերի հետ կապված հայ գյուղացու տնտեսությունը քանդվում եր: Այդ բավական չեր, խմբերն անցնելով հայ գյուղերով, վունակութ եյին անում նրանց, խլում գյուղացիներից վերջին պաշարը, տուրքեր հավաքում սարսափի մատնված գյուղացուց:

Խմբապետական կամայականությունը դառնում եր անտանելի, մանավանդ բանակում: Աշխատավոր մասսաներն այլևս չեյին հավատում Դաշնակցությանը. նրանք համակրանքով եյին լսում կոմմունիստական

խոսքը։ Շատ բնորոշ ե, զլուղացիության և բանակի տրամադրությունը վորոշելու համար, ապրիլի վերջերին, Սարիղամիշի Գ-րդ գնդում տեղի ունեցած ապրատամբությունը։

Մեր կուսակցությունն ուներ արդեն իր հենակետերը յերկրի բոլոր հիմնական վայրերում, և նրա անդամների թիվը անցնում եր հազարից։ Սակայն կաղմակերպչական տեսակետից նրա թուլ կողմը շարունակում եր մնալ բանակը և զլուղը։

Բագվի զրաֆումը Կարմիր բանակի կողմից 1920 թվի ապրիլի 28-ին և Ազգային խորհրդայնացումը յեղավ այն վերջին կաթիլը, վորը լեցրեց մասսաների հեղափոխական անհամբերության բաժակը։ Կուտակված դժոնությունն ուժգնութեն պութկաց մայիսի 1-ին և մարտացավ մայիսյան գինված ապստամբության մեջ։

Բագվի անկումը շնորհըել եր մեր դասակարգային հակառակորդին։ Սակայն պետք է ասել, վոր Դաշնակցությունը, իր դասակարգի շահերի տեսակետից, ճիշտ տակտիկական շրջադարձ կատարեց։ Իր ուժերը վերադասավորելու նպատակով ժամանակ շահելու համար նա սկսեց փորձեր անել հակառակորդի տչալը թմբարջությունը թմբեցնելու։ Նա առաջարկություն և անում կոմմունիստներին կուալիցիոն կառավարություն կազմել... Նա խորամանկորեն աշխատում ե հարմարեցնել իր լոգունգները մասսաների տրամադրությանը։ Շատ հետաքրքիր և այդ տեսակետից «Հառաջ.-ի մայիսեկլան համարում առաջին տեղը տպված արհ։ միությունների Միության Խորհրդի կոչը, վորի մեջ գտնում ենք հետեւյալը տոնակատարության կարգի առթիվ։

«Կլինի մեկ բեռնակիր ավտոմոբիլ՝ զարդարված պլակատներով, գրոշակներով, ծաղիկներով և Կարլ Մարքսի, Թրիստափոր Միքայելյանի, Շահումյանի, Ա. Զավարյանի, և. Աթարեկյանի և Ռոստոմի նկարներով...»

«Կեցցե՛ սոցիալիզմը! Կեցցե՛ Յ-ըդ Ինտերնացիոնալը!»

Ճիշտ ե, հետազայում դաշնակները ճգնում եյին ապացուցել վոր «Յ-ըդ» թիվը թլուրիմացությամբ և ընկել այդտեղ, բայց զարմանալի էի, թե ինչու այս «պատահական սխալը» հենց այդ որը յեղավ և վոչ կամ մի տարի առաջ, կամ մի ամիս հետո:

Հ. Հ. Դաշնակցության պաշտոնական որգանը հետեւալ առաջնորդողվ եր դիմավորում մայիսի 1-ը:

«Արյունոտ պալքարը համաշխարհային իմպերիալիզմի և աշխատավոր զանգվածների միջև շարունակվում ե ուժգնորեն... Ռուսական մեծ վայրիվերումը չհանդարտվեց դեռ, և նրա ալիքներն արդեն ծեծում են նաև մեր յեղերքներն անհանդարտ:

«Յեղբայրությունն ու համերաշխությունը բոլոր ազգերի միջև շարունակում են մնալ լոկ անհասանելի բաղձանք, և համամարդկային գաղափարների դրոշի հովանու տակ թագավորում ե շովինիզմի հոշոտումը մոլեգին...»

«Յեկ շատ ժողովուրդների ճակատագրի պես հայ ժողովորդի քաղաքական բախտն ել մնում ե անորոշ, աշխարհի հղորների քմահաճույքին խաղալիք, զոհ ճիշվաղ դիվանագիտության յեսապաշտ հաշիվներին...»

«Վերջ ազգամիջան կոփներին, կեցցե՛ ազգերի յեղբայրությունը...»

«Վերջ ժողովուրդների հարստահարությանը...՝  
կեցցե՛ միացյալ և անկախ Հայաստանը...»

«Վերջ գիշատիչ իմպերիալիզմի շահատակությանը...՝  
կեցցե՛ աշխատավորության ինտերնացիոնալը...»:

Կարծես դաշնակցականներն այդ որը «մոռացել»  
եյին, թե ինչ ելին ասում էրենք դեռ մի լերեք ամիս  
առաջ՝ 1920 թվի փետրվարի 24-ին, իրենց ոֆիցիոզի  
բերանով կոմմունիստների ձերբակալման ու աքսոր-  
ման առթիվ։

«...Հայաստանի պարլամենտը զրեթե միաձայ-  
նությամբ հավանություն տվեց կառավարության  
քայլերին (բոլշևիկներին Հայաստանից հեռացնելու...  
թ. Մ.): Յեվ ուրիշ կերպ չեր ել կարող լինել. այն  
կառավարությունը, վոր չի կամենում ծիծաղելի լերե-  
վալ և ընկնել կերենսկու որը, պետք և միշտ կամք ու  
վճռականություն ունենա հենց սաղմում խեղղելու  
այն բոլոր ուժերը, վորոնք գլուխ են բարձրացնում  
գոյություն ունեցող պետական իրավակարգի դեմ,  
վորտեղից ել դալու լինեն այդ ուժերը՝ ձախից թե  
աջից...»։

Վերպիսի անհետեսողականություն, վերպիսի  
մանր-բուրժուական յերերումներ, կասեյին մեր զըր-  
բացներից վոմանք, ամոթիածորեն փակելով իրենց  
աչքերը դասակարգացին պայքարի բարդ յեկեցների  
վրա, վորոնք մղում եյին Դաշնակցությունը դեպի  
տարբեր լոգունգներ ու քաղաքական տարբեր տակ-  
տիկա, հեղափոխական շարժումը խորտակելու նպա-  
տակով։ Յեվ սա հասկանալի լե. գրբացների համար  
աշխարհն անշարժ ե, իրենք ամենատես, ինչպես Բուղ-  
դան, ու ապագայի բոլոր կնճիռները պարփակված ի-

ըենց սեփական գոտում, վորի վրա դովելի համառությամբ ընդ հավիտլան բևեռված և նրանց անխըռով ու անվրդով հայացքը:

\* \*

Մինչև մայիսի 1-ը մեր կուսակցությունը, նույնիսկ Ալեքպոլի կոմիտեն, թերագնահատում եյին մասսաների հեղափոխական տրամադրությունը և մեր սեփական ուժերը: Կրկնում ենք, նույնիսկ Ալեքպոլի ղեկավար ընկերներից վոմանք, վորոնք դեռ հավանորեն կարծում եյին, թե «ամբողջ ժողովուրդը մեզ հետ ե», չելին սպասում, վոր այդ «ժողովուրդը» հանգընորեն փողոց դուրս գա կոմմունիստական դրոշակների տակ մայիսյան տոնը տոնելու: Հավագույն դեպքում սպասվում եր, վոր Ալեքպոլում կհաջողվի մեր կոմմունիստական ցույցը կազմակերպել, ունենալով մեզ հետ 4—500 բանվոր:

Սակայն մայիսի 1-ի առաջոտլան արդեն պարզվեց, վոր բանվորների տրամադրությունը շատ բարձր է: Մեզ հաջողվեց միայն կոմմունիստական ցույցը կազմակերպել, այլև վիճեցնել դաշնակցականների ցույցը, քաշելով նրանց մասսան ևս մեր յետելից: Զափազանց նշանակալից եր, վոր յերկաթուղում զծի սպասավորության բանվորները, վորոնք հայելու պես արտացոլում եյին գլուղի տրամադրությունը, ծեծելով իրենց դաշնակ ղեկավարներին, խլեցին նրանց ձեռքից իրենց՝ դիումս ազգայնական մակագրություններ կրող՝ դրոշակները և հետեւցին ավանդարդին՝ դեպույին: Որվա ընթացքում ցուցարարների թիվն աճելով հասավ մոտ 10,000-ի, և այդ հոծ բազմությունն արձագանգում եր կոմմունիստական լոգունգներին:

Ի՞նչպես Ալեքպոլում, նույնպես և Յերևանում ու գավառներում մայիսի 1-ը հսկայական մասսաներ դուրս բերեց փողոց։ Դաշնակցության մանյովը՝ վերցնել տոնակատարության նախաձեռնությունն ուղեկավարությունը՝ անհաջողության մատնվեց. տոնն անցավ ամբողջովին կոմմունիստական լոգունգների տակ։

Տոնը միաժամանակ հայտնաբերեց զինված ապրանքության անհրաժեշտությունն ու անխուսափելիությունը։

Կան ընկերներ, վորոնք կարծում են, թե մայիսսմեկյան գեմոնստրացիան ավելորդ երև և վնասակար, քանի վոր նա հայտնաբերեց մեր թագնված ուժերը, ստիպեց վաղաժամ ապստամբել և դյուրացրեց կոմմունիստական շարժման ճնշումը դաշնակ կառավարության կողմից։ Այդ տեսակետի վրա յե կանգնած ընկեր Շ. Ամիրխանյանը։

«Միակ հեղափոխական և այն ել սխալ քայլը, վոր կատարեց Արմենկոմը մայիսյան ապրանքության նախորդելին, դա մայիսի 1-ի խաղաղ գեմոնստրացիան եր Յերևանում և Ալեքսանդրապում։ Այնպիսի պայմաններում, լերը կարմիր բանակը մոտենում եր Բագվին... և յերբ, մի կողմից, ուժեղանում եյին ռեպրեսսիաները Հայաստանում, իսկ մյուս կողմից աշխատավոր մասսաները վառվում ելին անհամըերությամբ՝ լերկրում խորհրդավին իշխանություն հաստատելու համար, մայիսի մեկի գեմոնստրացիան պետք է զինական ապստամբության վերածվեր կամ թե վերջանար կուսակցական կազմակերպությունների և հեղափոխական ուժերի քայլայումով։ Ենդանի իրականու-

թիունից կտրված լինելու և մասսաների լեզուն չըմ-  
րըռնելու հետեւանք եր միայն մալիսի մեկին խաղաղ  
դեմոնստրացիա սարքելը, վորը նշանակում եր զի-  
նամարտից առաջ դուրս բերել իր ուժերը և ցույց  
տալ թշնամուն, յեթե, իհարկե, կար այն բանի ըմ-  
րըռնումը, թե մենք կանգնած ենք ալդ զինամարտի  
առաջ: Բացի «կորչեն դաշնակցականները», «կեցցե  
խորհրդավին իշխանությունը» լողունգներից, մայիսի  
մեկին ալլ լողունգներ չեյին կարող լինել և չկալին:  
Բայց այդ լողունգները մասսան հասկանում եր պարզ  
ու հասարակ ձեռվ ու. գործնականորեն, մանավանդ  
վոր բոլոր ճնշվածների իերկար սպասած ազատազրողը՝  
Կարմիր բանակը, արդեն շատ մոտ եր Բագվին, յերբ  
նշանակում եր, և նա արդեն Բագվում եր, յերբ սկսվում  
եր ալդ դեմոնստրացիան: Մյուս կողմից, թշնամին չեր  
կարող հանգիստ նաևի դեմոնստրացիալին և նախո-  
րոք չխորտակել այն դիրքերը, վորտեղից նրան մա-  
հացու վտանգ եր սպառնում: Ալլապես նա թշնամի  
չեր լինի: Մենք, յեթե ցանկանալինք կանխել դեմոն-  
ստրացիայի զինական ապստամբության փոխվելը,  
պետք ե վոչ միայն դաշնակցականներին զոհ դարձը-  
նեյինք կուսակցական կազմակերպությունը և գլխատե-  
յինք հեղափոխական շարժումը, այլև, խախտելով մաս-  
սաների ակտիվ կամքը, վարկաբեկելիինք ինքնելս  
մեզ մասսաների առջև: Մասսաները կապստամբեյին և  
առանց մեզ, ցաքուցրիվ և անկանոն կերպով, տալով  
գյուղացիական պարտիզանական ու զինվորական դա-  
սալքված խմբեր: Իսկ առանց այդ դեմոնստրացիայի  
հավանորեն մեզ կհաջողվեր ապստամբության որը հե-  
տաձգել և կազմակերպել այն»\*):

\*) Շ. Ամիրխանյան—«Մայիսյան ապստամբությունը  
Հայաստանում», Մոսկվա, 1926, յերես 100:

Մենք ներողություն ենք խնդրում ընթերցողից  
այսքան լիրկար ցիտատի համար, սակայն առանց  
սրան անհասկանալի կլիներ ընկ. Շ Ամիրխանյանի  
գիրքն այս հարցում:

Ընկ. Շ. Առն անպայման ու միանգամայն իրաւ-  
վացի կլիներ, լեթե միայն ընդունենք, վոր մալիսի  
նախորեկին «ամբողջ ժողովուրդը մեզ հետ եր», և ու-  
րեմն ամբողջ խնդիրն ապստամբության ռազմական  
պատրաստության մեջ եր:

Բայց, նախ և առաջ՝ յերբեք և վոչ մի հեղափո-  
խության ժամանակ չի պատահել, վոր «ամբողջ ժողո-  
վուրդը» (լեթե պայմանավորվենք իսկ ժողովուրդ  
խոսքի տակ հասկանալ աշխատավորությունը) մեզ  
հետ լինի: Մեզ հետ են լինում «ժողովուրդի» վճռա-  
կան նշանակություն ունեցող հատվածները. վճռական  
նշանակություն ունեցող վայրերում. լավագույն դեպ-  
քում մենք ունենք աշխատավորության մեծամաս-  
նության համակրանքը:

Յերկրորդ՝ աշխատավորությունն իր թեկուզ վըճ-  
ռական նշանակություն ունեցող մասում դեռ պատ-  
րաստ չեր ապստամբության համար: Նա դժոնի եր  
ու թերահավատ Դաշնակցության հանդեպ, բայց այդ  
դժոնությունը դեռ հեղափոխական ակտիվության  
չեր վերածվել (չե՞ վոր Արմենկոմի տարած քաղաքա-  
կանության շնորհիվ անբավարար եր լիզել կոմմու-  
նիստական աշխատանքը գյուղում ու բանակում և  
առանձնապես անբավարար՝ այդ աշխատանքի ուղղու-  
թյունը): Դազախի ու Սարիղամիշի դեպքերը կարեռ  
սիմպոմներ եյին, բայց և այնպես միայն սիպտոմներ:  
Իսկ խոշոր զանգվածների տրամադրությունը կարելի

յեր շոշափել ու փորձել միայն կոլեկտիվ գործողությունների միջոցով, ինչպիսին մալիսի մեկի ցուցը եր։ Նա յեր, վոր դժգոհությունը վերածեց հեղափոխական ակտիվության և խթանեց մասսաների գասակարգային հասունացման գործը։

Յեզ իսկապես, մի փոքր մանրամասն կանգ առնենք թեկուզ Ալեքպոլի վրա. տեսնենք, թե նախնչ նշանակություն ունեցավ ա) մասսաների հեղափոխականացման տեսակետից և բ) Դաշնակցության քաղաքական վարկաբեկման տեսակետից (ըստ ընկ. Շ. Ա.-ի, Դաշնակցությունն ամբողջովին և հարյուր տոկոսով վարկաբեկված եր արգեն, քանի վոր, ինչպես ասում են այսօն 1917 թվի հուլիսյան դեմոնստրացիան վարկաբեկեց մենշևիկներին. ու եսերներին, ապա մալիսի մեկի դեմոնստրացիան Հայաստանում պիտի վարկաբեկեր միայն մեր կուսակցությունը...):

Առավոտյան կայարանում միտինգ ե, բանվորների մի խոշոր մասը դեռ լսում ե դաշնակներին։ Մի ժամ հետո կայարանից դուրս ե գալիս թափորը։ Դեպոյի բանվորները հրավիրում են գծի և մյուս բանվորներին հետևել իրենց։ Դաշնակները չեն թողնում, բանվորներն ընդհարվում են նրանց հետ։ Վարկաբեկում և 1. Մասսաների տրամադրությանը համապատասխանում ե հետևյալ լողունգը. «Կեցցե՛ պրոլետարիատի միասնականությունն ու համերաշխությունը, կեցցե՛ բանվորական տոննը՝ մայիսի մեկը»։

Միտինգ յերկաթուղային դպրոցի մոտ։ Դուրս են գալիս կոմմունիստները, խոսում, հարվածում Դաշնակցությանը։ Դաշնակները լսում են։ Վարկաբեկում և 2. Լոգունգներն են. «Կեցցե՛ Խորհրդային Ռուսաստանը, կեցցե՛ Խորհրդային Ազրբեջանը»։

Յերկաթուղու և քաղաքի ցուցարարները միանում են, սկսվում ե միախնդը քաղաքալին ալգու մոռ Դաշնակները խոսում են և մորթին փոխած մուսավաթիսաների» մասին Ազրբեջանում, աշխատում սեացնել թյուրք կոմմունիստներին Ցուցարարները զբժգոհություն են հայառում և լուցնում նրանց։ Վարկարեկում № 3։ Լոգունզը՝ «Բագուն ընկավ, հերթը Ցերեվանինն ե, կեցցե խորհրդավին Հայաստանը»։

Կեսորից հետո ցուցարարները դիմում են դեպի զորանոցները, «Բանակը կանչում ե բանվորներին»։ Դաշնակներն սպաների մի մասի հետ փորձում են բռնի կերպով խանգարել զորքի ու բանվորության յեղբայրացումը, բայց իզուր։ Վարկարեկում № 4։ Մասսայի տրամադրությունն արտահայտում են արգեն հետեւալ լոգունզները՝ «Կեցցե բանվորների ու զինվորների դաշինքը», «Կորչի խմբապետական կառավարությունը»։

Ժամը 2-3-ին թափորը վերադառնում ե, դաշնակների ակումբի մոտ սրանք պրովոկացիոն բացականչություններ են արձակում Խորհրդային Ռուսաստանի և Ազրբեջանի հասցեյին։ Ցուցարարները հետապնդում են, դաշնակներն սկսում են ներսից կրակել անդեն ամբոխի վրա։ Վարկարեկում № 5։ Լոգունզը՝ «Կորչի Դաշնակցությունը»։

Ցերեկոյան՝ նորից յերկաթուղու շըջանում, կոմմունիստական կուսակցության ներկայացուցիչը կոչեանում պատրաստվելու զինված ապստամբության՝ դաշնակցական իշխանությունը տապալելու նպատակով։ Ցուցարարներն ընդունում են կոչը խանդավառությամբ, զինված ապստամբության լոգունզն ամբող-

ջովին համապատասխանում և նրանց տրամադրությանը:

Ցեթե մեկը փորձեր առավոտյան դուրս գալ կարանում առանց այլեալի ապստամբության լողունս գով, նրան բանվորների մեծամասնությունը, բացի դեպոյից, գուցե չեր հասկանաւ Մյուս կողմից, յեթե մեկը նույն որը էերեկոյան փորձեր համոզել բանվորներին, վոր հարկավոր և սահմանափակվել «կեցցե պրոլետարական համերաշխությունը, կեցցե մայիսի մեկը» լոգունգներով, նրան կշացնեյին և ըստ արժանույն կմկրտեցին իբրև մենշևիկ։ Մի որվա ընթացքում Ալեքպոլի, ինչպես և մյուս վաչրերի, բանվորներն ու զինվորները (և վորոշ չափով նաև զյուղացիները) գործնականում անցան մի այնպիսի հոյակապ քաղաքական դպրոցով, վորապիսին չեր կարող տալ նաև մեր ամիսների ագիտացիան ու պրոպագանդիստական աշխատանքը։

Սիտուացիան Հայաստանում հեղափոխական երթե մայիսի մեկից առաջ, թե նրանից հետո։ Մասսաներն ոքյեկտիվորեն հեղափոխականանում ելին, լեցվում հեղափոխական անհամբերությամբ։ Սակայն ոքյեկտիվորեն նրանք դեռ չելին գիտակցում այդ, և մայիսի 1-ի նշանակությունը հենց նրանումն եր կայանում, վոր նա բացեց աշխատավոր մասսաների աչքերը, վառեց նրանց մեջ ատելության թույնը դեպի գաշնակ պետության վողջ սիստեմը (և վոչ միայն այդ սիստեմի առանձին ներկայացուցիչներն ու հատվածները, ինչպես առաջ եր), զինեց նրանց հեղափոխական անհաշտ պայքարի պատրաստակամությամբ։ Ի՞նչ կնշանակեր չմասնակցել մայիսի 1-ի տոնա-

կատարությանը։ Կնշանակեր չհայտնաբերել հեղափոխության պոտենցիալ ուժերը, խանգարել մասսաների հեղափոխականացման գործը, թողնել, վորպեսզի դաշնակցականները վարագուքեն դասակարգային պարարը, իրենց վրա վերցնեն մայիսի 1-ի տոնակատարության նախաձեռնությունը, հիմարացնեն հասունացած քաղաքական գիտակցության դեռ չհասած մասսաներին, ուղղեն նրանց բնազդային զայրուցիթը ներքին ու արտաքին թիւրքի դեմ։ Սա կնշանակեր քաղաքականորեն յետ տանել մասսաները զեպի փետըրվարը, հունվարը, 1919 թիվը, նորից, թերես ժամանակավորապես զցել նրանց դաշնակ ազգեցության տակ։ Այս ձեռվ, այս, կարելի լեր վարկաբեկել մեր կուսակցությունը։

Հանուն ինչի՞ Վորպեսզի, ստույգ ազգյուրներից իմանալով, վոր «ամբողջ ժողովուրդը մեղ հետ ե», մի զեղեցիկ «որ կամ, ավելի շուտ՝ գիշեր, սուսիկ-փուսիկ, գաղտագողի, զեկավարության ձողիկի մի շարժումով, սազմական ապստամբություն բարձրացնելինք ու իշխանությունը վերցնելինք» Բայց, ինչպես տեսանք, այդ «ժողովուրդը մեղ հետ ե» թեղիսը շատ միամիտ կերպով եր պատկերացնում իրերի բարդ ընթացքը, իսկ առանց այդ թեղիսի դավադրական այդ ծրագիրը դառնում ե բլանկիդմի ու զյուղացիական պարտիզանշնչնայի մի խառնուրդ։ Հեղափոխությունները գաղտագողի չեն կատարվում։

Մենք համաձայն կլինելինք ընկ Շ. Ամիրխանյանի հետ, յեթե նա ասեր, վոր կոմմունիստները մայիսի մեկին չպետք ե հայտնաբերելին իրենց բոլոր թագնված ուժերը, վոր մեր զինվորական կազմա-

կերպության բոլոր դեկավարները չպետք եւ հանդես դային միտինգներում, վոր, վերջապես, չպետք ել բաց անել մեր բոլոր քարտերը դաշնակների առաջ: Սակայն մենք պնդում ենք, վոր թեև այդ հանգամանքը նշանակություն ունեցավ գեղքերն արագացնելու տեսակետից, նա վոչ մի կերպ չեր կարող դասվել ապստամբության պարտության փոքր իշտած աշքի ընկնող պատճառների շարքում:

Ընկ. Շ. Ամիրխանյանը գրում ե, վոր Դիլիջանի կոմիտեն արգելել եր դեմոնստրացիան: Չենք վիճում, գուցե Դիլիջանի պայմաններում դեմոնստրացիան անհրաժեշտ չեր, և մեր ընկերների այնտեղ տարած քաղաքական աշխատավնքը շատ ավելի խոշոր եր յեղել, քան այլ վայրերում, ինչպես պնդում ե ընկեր Շ. Ա.՝ը, և դեմոնստրացիան կարող եր վաղաժամ վաւանդի լինութարկել կազմակերպությունը, բայց տարածել Դիլիջանի փորձն ամբողջ Հայաստանի վրա՝ կնշանակեր վերածել մեր կուսակցությունը մասսաներից կտրված մի դավագրական խմբակցության: Յեթե մի բան ընդունելի լի մի փոքրիկ մասի համար, դա դեռևս չի նշանակում, վոր նույնը պետք ե ընդունելի լինի ամբողջի համար:

\* \* \*

Ճույցն անհրաժեշտ եր: Ուրիշ խոսք, վոր հարկավոր եր նախատեսել նրա ընթացքն ու հետևանքները և ոգտագործել նրա արդյունքները, իսկ գրահամար պահանջվում եր մեծ ճկունություն ու վճռականություն: Վոչ մեկը, վոչ մյուսը չուներ Արմենկոմը: Յեթե հունվարին վտանգավոր եյին Ալեքպուլի

ընկերների \*) ծայրահեղ, «ապստամբական» տրամադրությունները, ապա մալիսին ամենամեծ վտանգն այն եր, վոր Արմենկոմը չեր ըմբռնում գեռ, վոր հանգամանքները փոխվել են, և զինված ապստամբությունը կլանքի ու մահու խնդիր եւ:

Մայիսի մեկից հետո այլևս վերադարձ չկար, Զապըստամբել՝ կնշանակեր թուլլ տալ, վորակեսզի դաշնակցական կառավարությունը գլխատի կրմունիստական շարժումը, խորտակի մեր բոլոր դիրքերը. միաժամանակ դա կհիսախափեցներ մասսաները և կխորտակեր նրանց հավատը դեպի մեր կուսակցությունը, վորով նրանք տոգորվել ելին մայիսի մեկին:

Մեր ընկերներից շատերը ոպըրակուսանքի մեջ եյին. Ֆառարստի նման նրանք կանչել եյին ոտարերկրյա անդունդներից հեղափոխության դեկին, և յերբ նա լեկել եր կանգնել նրանց առաջ իր ամբողջ ահավոր հասակով, շշմել ելին և իրենք ել չգիտելին՝ ինչպես վարդել նրա հետ, իսկ դեպքերը պահանջում ելին վճռականություն, արագ, արագ ու արագ զործողություններ, շնչակտուր ընթացք, չթողնելու համար, վորակեսզի թշնամին ուշքի դա, չթողնելու, վորակեսզի մասսաների արամադրությունը սառչի, ու լքվածություն առաջ դա:

Մինչև ամսի 5-ը տատանվում եր Արմենկոմը.

\*) «Ալեքպոլի ընկեր» արտահայտությունը մերը չե, այդ գործածում են մայիսյան ապստամբության մասին գրող ընկերներից վորանք: Ալելի լավ կլիներ ասել Ալեքպոլի միքանի ընկերներ, վորովհետեւ խոսքը վերաբերում և Ավլիսին և նրա միքանի համախօններին, վորոնք, ճիշտ ե, աղդեցիկ եյին թե Ալեքպոլի կոմիտեյում, թե յերկաթուղում:

չորս որ, վորոնց ընթացքում հավաքում եր իր ուշքն ու ուժերը Դաշնակցությունը։ Արմենկոմի համար շըրջադարձը դժվար եր, և նա միայն Ալեքպովի կազմակերպության անսպասելի ճնշման տակ տվեց սանկցիա ապստամբություն կազմակերպելու համար։

Փաստորեն ապստամբությունն արգեն սկսվել եր. կայարանը կարծես բաժանված եր քաղաքից, և հենց մայիսի 2-ից զրահագնացքը դարձել եր ուխտառեղի զինվորների և նույնիսկ սպաների համար, վորոնք խումբ-խումբ գալիս եին և հավատարմություն յերդվում հեղափոխությանը։

Վերջապես, մայիսի 5-ի գիշերը, զրահապատում գումարված խորհրդակցությունը՝ մասնակցությամբ շրջաններից յեկած աշխատավորների (Ղազախ, Ղարս, Սարիղամիշ), Արմենկոմի ներկայացուցիչների և տեղական ընկերների, թվով 13 հոգի, միաձայն վորոշեց կանգնել արգեն փաստորեն ծավալվող ապստամբության գլուխը և կազմակերպված բնույթ տալ նըրան։ Ընդունվեց, վոր ապստամբությունը պիտի ըսկըսվի Ղազախում, վորտեղից հնարավոր եր ստանալ Կարմիր բանակի անմիջական ոժանդակությունը, ապա պիտի ապստամբելին Ալեքպովը և մյուս վայրերն ու հեղափոխական ուժերը, իրար միանալով՝ շարժվելին Յերևանի վրա։

Ուրեմն շարժման սկզբից հենց գործվում եր մի խոշոր վոչ միայն տակտիկական, այլև քաղաքական սխալ։ Ալեքպովում արգեն ավելի քան հասունացած ապստամբության հարցը կապվում եր Ղազախի դեռևս պրոբլեմատիկ շարժման հետ, քանի վոր Ղազախի հետ հասարակ հաղորդակցություն հաստատելն իսկ՝ առանց

խոշոր զինված ուժեր գործադրելու՝ անթիվ պատահականությունների կարող եր յենթակա լինել և նույնիսկ, այնտեղ ապստամբություն ծագելու դեպքում, Աւելիքպուը կարող եր գեռ որեր շարունակ տեղեկություն չստանալ: Մինչ այդ, կովի պատրաստ ուժերը քայլայի անգործության ելին մատնվում:

Հետեւանքն այն եր, վոր ուղմահեղափոխական կոմիտեն չորս որ ևս\*) սպասեց ազդանշանի Ղազախից, սակայն այդ ազդանշանը չեկավ: Մինչդեռ բանվորները շարունակ շտապեցնում եյին հեղկոմին, պահանջում դիմել վճռական քայլերի: և նրանք միանգամայն իրավացի եյին: Դաշնակներն արդեն նորից հավաքում ելին իրենց ուժերը: Մայիսի 8-ին նրանք՝ խմբելով խանութպաններին, տաճկահայ գաղթականներին և քաղաքի թափթփուկներին, կազմել եյին թափոր և լեկել կալարան՝ զրահապատից նրա թնդանոթները խլելու և Զանգիբարաւար՝ թյուրք գլուղացիներին ճնշելու համար ուղարկելու: Յերեանում պարլամենտը

\*) Զդիտենք ինչ հիման վրա միքանի ընկերներ, վորոնց թվում ընկ. Շ- Ամբրիանյանը, պնդում են, իբր թե վորոշված և յեղել ապստամբությունն սկսել Ալեքպուլից: Դժբախտաբար այդ այդպես չե. Հիշված խորհրդակցությանը մասնակցել ե և տողերիս գրողը: Դազախի ընկերները, ինչպես յերեսում ե, իրենց հերթին, ինչ-վոր տարորինակ գիշպածով, սպասել են ազդանշանի Ալեքպուլից: Սակայն մեզ թվում ե՝ անիմաստ կլիներ Ալեքպուլի ապօստամբության ուշացման պատասխանատվությունը գցել նրանց վըրա: Չենք խոսում այն մասին, վոր չեր կարելի առնասարակ տեխնիկական կապի պատահականությունների հետ կապել ապստամբության բախտը: Ալեքպուլի համար սա խոշոր քաղաքական խընդիր եր, — հապաղել, ձգձգել, թե անմիջապես անցնել հարձակման— և նա պետք ե քաղաքականորեն լուծվեր:

ցրված եր, ստեղծվել եր դաշնակցական բյուրուի կառավարությունն արտակարգ լիազորություններով. տե՛նդուս պատրաստություն եր գնում շարժումը ջախջախելու համար:

Մայիսի 8-ի ցույցն ստիպեց ուազմա-հեղափոխական կոմիտեյին հրաժարվել ապստամբության հին ծըռագրից, չսպասել Ղազախի ազգանշանին և անմիջապես գրավել իշխանությունը: Ցեզ մայիսի 10 ին, գըրավելով Ալեքպոյ քաղաքը՝ ուազմ-հեղկոմը Հայաստանը հայտարարում ե խորհրդացին:

\* \* \*

Հայաստանի ուազմա-հեղափոխական կոմիտեն ըստեղծվել եր նույն՝ ամսի 5-ին գումարված խորհրդակցության ընթացքում. նրա մեջ մտել ելին յերկաթուղարին յերեք բանվորներ՝ Արշակ Գոզունցը, Լեոն Ուլիբեկյանը, Գևորգ Սարգսյանը, յերեք զինվորական՝ զրահագնացքի պետ կապիտան Մուսալելյանը, զինվոր Պետրոս Պետրոսյանը և մի այլ զինվոր, Ալեքպոլի կոմիտեյից՝ Աշոտ Տեր-Սահակյանը և Արմենկոմից՝ Ավես Նուրիջանյանը, Արտաշես Մելքոնյանը և Դրաստամատ Տեր-Սիմոնյանը: Հասկանալու համար իրերի հետագա ընթացքը՝ արժե մոտիկից ծանոթանալ այդ կազմի հետ:

Կապիտան Մուսալելյանը ուազմ-հեղկոմի և աւպատամբության ղեկավարության ամենացալտուն դեմքերից մեկն եր: Մաքուր և անձնվեր հեղափոխական եր նա, բայց ոռմանտիկ ու յերազող. մինչև վերջին ըոպեն նա շարունակում եր հավատալ, թե իրեն կը-հաջողվի համոզել դաշնակցական գեներալներին, և Հա-

յաստանը կդառնա խորհրդավին առանց արյուճնեղության։ Նա անկեղծորեն ուզում եր զերծ պահելնոր արհավիրքներից Հայաստանի հոգնած աշխատավորությունը։ Նա չեր կարողանում պատկերացնել, վոր դաշնակները դիմադրեն, չեր վոր Կարմիր բանակի հաղթանակները, մուսավաթական Աղբբեջանի վերացումն արդեն անիմաստ եյին դարձնում դաշնակ պետության գուությունը։ Նա գեռ գերի յեր խաղաղ իւլյուզիաներին և զոհվեց վերջիվերջո այդ իւլյուզիաների շընորհիվ։

Մյուս աչքի ընկնող գեմքն Ավիսն եր. կրակոտ տեմպերամենտի տեր մարդ, վորը, սակայն, ուժեղ հոետոր լինելով հանդերձ, ստրատեգ չեր. Նա արագորեն վտավում եր ու հանգչում. տրամադրության գերին նա դրուրությամբ վոգենորվում եր և նույնքան հեշտ կերպով հուսահատվում։

Եերեւանից յեկած Արմենկոմի յերկու անդամներն իրենց հետ բերել եյին Հայաստանի կոմիտելի բոլոր կասկածներն ու տատանումները։ Ռազմա-հեղափոխական կոմիտելի մեջ մտած բանվորները թեև ավելի վճռականորեն ելին տրամադրված, հետեւում ելին Ավիսին, վորի ազգեցությունը մեծ եր։

Ռազմ-հեղկոմը վորոշեց գրավել քաղաքը ամսի 10-ին. Բայց այստեղ ևս արտահայտվեց նրա զեկավարների խառնվածքը։ Կարծես թե շարժվան հաջողության և հեղափոխական նապատակահարմարության տեսակետից, պետք եր նույն, ամսի 9-ի զիշերը, վորը ինչնված խմբերով զրավել քաղաքի բոլոր կարեոր պունկտերը, առանց վորևէ աղմուկի (այստեղ, քանի վոր մասսաների հեղափոխական տրամադրությունը

փորձված եր, այդպիսի «գավազրական» մեթոդները  
վոչ միայն հնարավոր եյլին, այլև անհրաժեշտ) ձեր-  
բակալել դաշնակ դիկավարներին և առավոտյան շարժ-  
վել հակառակորդի վրա, Յերեանի ու Ղարաքիլիսա-  
լի ուղղությամբ: Սակայն ռազմ-հեղկոմը բոլորովին  
այլ տակտիկա չե գործադրում: Ամսի 10-ի առավոտ-  
վանից բանակը շրջապատում ե քաղաքը, դաշնակնե-  
րին առաջարկում ե քաղաքը հանձնել (կարծես թե  
նա փաստորեն մեր ձեռքում չեր), հնարավորություն  
և տրվում նրանց ալգախոռվ թագնվել, տեղեկացնել  
քաղաքից դուրս գտնվող իրենց կողմանկիցներին, կազ-  
մակերպել անլեզարարաց: Մի ամբողջ որ ել այս-  
տեղ ե կորչում: բանակը հոգնում ե իդուր տեղը, վերջ  
ի վերջո, յերեկոյան մենք մտնում ենք քաղաք ա-  
ռանց կովի:

Ի՞նչ նպատակ ուներ այս դեմոնստրացիան: Կա-  
րելի՞ յե արդյոք համեստել սա մայիսմեկյան դեմոն-  
ստրացիայի հետ: Վոչ մի կերպ, իհարկե: Այստեղ  
այդ դեմոնստրացիան մասսաները հեղափոխականաց-  
նելու և զորահավաքի հրավիրելու նպատակն ուներ,  
իսկ ամսի 10-ի զինված դեմոնստրացիան մասսանե-  
րի համար անհասկանալի յեր և նրանց մեջ տարակու-  
սանք եր միայն հարուցում: Զենք սխալվի, յեթե ա-  
սենք, վոր այս դեմոնստրացիան նպատակ ուներ  
ցույց տալու հեղափոխական ուժերը դաշնակ կառա-  
վարությանը, նրա վրա ազդելու և նրան խոնարհց-  
նելու դիտավորությամբ: Բայց դասակարգալին թշնա-  
մին չեր ուղում խոնարհվել, նա պատրաստվում եր  
արյան մեջ խեղդելու հեղաշրջումը: Յեվ դեմոնստրա-  
ցիան վոչ միայն անոգուտ եր, այլև վնասակար:

\*\*\*

Յերեք որ մնաց Ալեքպոլում իշխանությունը կոմմունիստների ձեռքին: Յերեք որքա ընթացքում շատ քիչ բան կարելի յե անել: Այնուամենայնիվ հեղափոխության ծավալման անհրաժեշտ նախապայմանները հնարավոր եր ստեղծել:

Բանվորները զենքի տակ եյին անցել: Յերկաթուղում կազմակերպվել եր կարմիր գվարդիան: Յեկ զրպարտություն և ասել, թե բանվորներին չեն զինել մայիսյան ապստամբության ժամանակ: Սակայն բավական չեր կարմիր գվարդիա ստեղծել: հարկավոր եր այդ կարմիր գվարդիան նպատակահարմար ոգաագուծել: Իսկ նա անդորրության եր մատնված՝ միայն պահակային աշխատանք տանելով քաղաքում և կայարանում:

Բանակի և զինված բանվորների միջև կապ համարյա չկար: Մինչդեռ այդ կապի անհրաժեշտությունը չափազանց մեծ եր, շնորհիվ բանակի յուրահատուկ պայմանների:

Ռազմ-հեղկոմն ուներ իր տրամադրության տակ, բացի զրահագնացքից, ամբողջ կայազորը, յերկու հեծելազնդով: Սպալությունը ևս իր ճնշող մեծամասնությամբ անցել եր հեղափոխության կողմը, և սա միայն Ալեքպոլում չեր, այլ և ամբողջ Հայաստանում: Մայիսյան ապստամբության ամենաբնորոշ յուրահատկություններից մեկն ել ալդ եր, և արժե զրա վրա կանգ առնել: Սպայության դիրքը բացատրվում և առաջին հերթին այն ատելությամբ դեպի խմբապետներն ու խմբապետական ռեժիմը, վորը նսեմացնում եր բոլոր մլուս նկատառութները. չնայած վոր սպայությունը

բանակում ոժտված եր դեռևս վորոշ արտօնություն-ներով, սակայն նա զգում եր շարունակ իր գլխին կախված խմբապետական բոռնցքը։ Վորոշ նշանակություն ուներ և սպայության ռուսական որիենտացիան։ Թիչ դեր չխաղաց նաև այն, վոր սպայությունն իր մեծամասնությամբ հույս ուներ, վոր հեղափոխությունն անարյուն կերպով կկատարվի։ Զհաշվելով այն հականեղափոխական սպաներին, վորոնք դաշնակների ագենտուրան ելին հանդիսանում հեղափոխական բանակի ներսում, սպայությունը շերտավորվում եր յերկու մասի։ Փոքրամասնությունն անկեղծորեն կապվում եր զինվորների և կոմմունիստական շարժման հետ, մեծամասնությունն սպասողական դիրք եր բռնել, ուղեկցում եր հեղափոխությանը և ընդունակ եր թե վերջնականապես մոտենալու մեջ և թե հետեւելու զինվորական դիկտատուրայի լողունգին, վորն արդեն սկսել եր տարածվել. մեզանից և մեր տակտիկայից եր կախված, թե ինչ ճանապարհով կգնար այդ միջնաշերտի խոշոր մասը։

Սպայության անցնելը հեղափոխության կողմն արդեն իսկ եր դրոշմ եր դնում շարժման վրա։ Ուսադիրների հարցը չեր կարևոր—նա լուծվում եր,—այլ այն, վոր զինվորական մասսան դժգոհում եր նրանից, վոր բանակում վոչինչ չի փոխվել, վոր սիրելի կամ տանելի սպաների հետ միասին մնացել են և ատելիները։

Ռազմա-հեղափոխական կոմիտեյի սխալներից մեկն ել այն եր, վոր սպաների ձեռքը թողեց ապստամբության ամբողջ ռազմական դիկավարությունը (շտաբի պետ եր նշանակվել գնդապետ Նորդանլանը, վորը, ինչ-

պես պարզվեց, հետո շարունակ կապված եր դաշնակունքը հերի հետ և մեծ դեր խաղաց բանակը կազմակուծելու գործում) և մինչև վերջին բովեն չփորձեց դիֆֆերենցիացիա մոցնելսպայության մեջ, զաել այդ բացարձակ հակառեղափոխական ելեմենտներից և քաշելտատանվող տարրերը դեպի հեղափոխություն՝ ապահովելով զեկավարող դիրքերը կոմմունիստ զինվորների ու բանվորների ձեռքում՝ կոմիսարների սիստեմի միջոցով։ Սխալ էր նաև այն, վոր չեցին կազմվել զինվորական պատգամավորների խորհուրդներ, վորոնք բանակը հեղափոխականացնելու և նրա մարտունակությունը պահպանելու հիմնական միջոցներից մեկը պիտի հանդիսանային \*): Վերջապես, աններելի սխալ եր այն, վոր բանվորական գվարդիան ու զինված կոմմունիստները, գոնե վորոշ մասով, չեցին մտցվել բանակ՝ այնտեղ քաղաքական աշխատանք տանելու և պրոլետարական ցեմենտ հանդիսանալու համար։

Ալեքպոլի շրջանի գյուղերում կուսակցությունն աշխատանք տանում եր։ Խոշոր ակտիվություն ելին հանդես բերել Քաֆթառլիի կազմակերպությունները։ ագիտատորներ եյին ուղարկվել շրջանները, նաև Աղբարայի թյուրքաբնակ շրջանը։ Բայց այստեղ ևս կար մի խոշոր բաց, վորը կարեոր նշանակություն ուներ։ Դա այն եր, վոր ռազմ-հեղկոմը չեր տվել դեռ իր քաղաքական գեկլարացիան գլուղացիներին, չեր ասել պաշտոնապես, թե ինչ եւ տալիս նա Հայաստանի գյուղին։

\*) Բանվորական խորհուրդներ կազմակերպելու անհրաժեշտությունը դեռ այնքան սուր չեր զգացվում, քանի վոր արհմիւթյունները փոխարինում եյին իրենցով այդ խորհուրդները։

Սակայն վորքան ել խոչոր նշանակություն ուն  
նենար քաղաքական, ազիտացիոն-դաստիարակչական  
աշխատանքը, նա չեր հիմնականն այդ որերին։ Իհար-  
կե նա պետք ե շարունակվեր ավելի ու ավելի ուժեղ  
թափով, բայց ծանրության կենտրոնը զինվորական  
գործողությունների հաջող կազմակերպման մեջ եր։  
Առաջին որից խսկ զինվորական գրությունը բարդա-  
ցավ։ Ղարսն ու Սարիղամիշն ապստամբեցին, բայց  
կապը նրանց հետ թուլլ եր։ Ղարաքիլիսայում ձեր-  
բակալված եյին բոլոր կոմմունիստները, և ապստամ-  
բությունը չեր հաջողվել։ Անհրաժեշտ եր արագորեն  
շարժել զրահապատի մի մասի հետ թեկուզ մի փոք-  
րիկ զորամսու գեպի Ղարաքիլիսա, ապահովել յեր-  
կաթզիծը և տոննելը, բարձրացնել ապստամբություն  
Ղարաքիլիսայում և կապվել Դիլիջանի հետ։ Մեկ, ա-  
մենաշատը յերկու որվա ընթացքում այդ կարելի յեր  
իրագործել։ Սակայն այդ չարվեց, խսկ յերկու որ հե-  
տո ճանապարհն արդեն փակվել եր։

Եթե Սարիղամիշում ապստամբությունը հաջող  
եր, Ղարսում, Հայաստանի ամենամեջանական քա-  
ղաքներից մեկում, գրությունը շատ լուրջ եր։ Բանա-  
կը՝ ապստամբելուց հետո, սկսել եր սպաների հետ  
միասին տատանվեր Հարկավոր եր Ալեքպոլի վոչ այն-  
քան ուազմական, վորքան բարոյական ոգնությունը՝  
Ղարսում բեկումն առաջ բերելու համար։ Ղարսը պա-  
հանջում եր ուղարկել զրահագնացքը։ Ռազմ-հեղկոմը  
համաձայնեց այդ պահանջին, սակայն չկատարեց այն։  
Այնինչ զրահագնացքի մի պլատֆորման և Սարիղա-  
միշի մի բատալյոնը կարող եյին Ղարսի անկման ա-  
ռաջն առնել։ Կարելի յեր, յեթե դա անհրաժեշտ լի-

ներ, նույնիսկ ամբողջությամբ փոխադրել Սարիղաւ-  
միշի կայտղորը Ղարս, թեկուղ տաճկական սահմանա-  
գծի մերկացման գնով. գեպքերը ցուց տվին, վոր  
տաճիկ բանակը մտադրություն և հնարավորություն  
չուներ իսառնվելու հայաստանի ներքին գործերին:

Ամսի 12.-ին Ղարսն ընկափ. իսկ ռազմ-հեղկոմը  
դեռ վոչ մի քայլ չեր արել ապստամբությունը ծավա-  
լելու համար: Զրահապատի մի մասը հետախուզու-  
թյան եր դուրս չեկել Յերեանի կողմը և թեթև ընդ-  
հարում ունեցել Սեպուհի հետ: Սա յեր միտկ ռազմա-  
կան գործողությունը: Մուսայելլանը դեռ շարունակում  
եր բանակցել գաշնակ գեներալների հետ, խորհուրդ  
տալով նրանց անցնել հեղափոխության կողմը: Իսկ  
բանակը քաղաքի տակ պաշտպանողական դիրքեր  
բռնած, թրջվում եր հորդ անձրեի տակ, հուսալքվում  
և կասկածներով ու դժգոհությամբ լեցվում:

Որըստորե թուլանում ելին հեղափոխության ու-  
ժերը, իսկ ռեակցիան ամբապնդվում եր, հակահար-  
ձակման անցնում:

Ռազմ-հեղկոմի քաղաքականությունը վոչ մի կապ  
անգամ չուներ այն «ապստամբության արվեստի» հետ,  
վորի մասին խոսում եր Մարքսը: 1917 թ. հոկտեմ-  
բերի 8-ին Լենինն իր «Կողմնակի մարդու խորհուրդ-  
ները» նամակում բերում եր Մարքսի հետեյալ մտքե-  
րըն այդ արվեստի հիմնական կանոնների մասին.—

«1. Յերբեք զիանալ ապստամբության հետ և՝ ըս-  
կսերով այն՝ հաստատ գիտենալ, վոր պետք և զնալ  
մինչեվ վերջ:»

2. Անհրաժեշտ և հավաքել վճռական մոմենտին  
և վճռական նշանակություն ունեցող տեղում ուժերի

իուուր գերակօռություն, ալլապես թշնամին՝ ունենալով ավելի լավ պատրաստություն ու կազմակերպություն՝ կվոչնչացնի ապստամբներին:

3. Թանի վոր ապստամբությունն սկսված ե, պետք ե զործել ամենամեծ վճռականությամբ և անպայման անցնել հարձակման: «Պաշտպանողական դիրքը զինված ապստամբության մահն ե»:

4. Պետք ե աշխատել հանկարծակիի բերել թշնամուն, ընտրել այնպիսի մոմենտ, յերբ նրա զորքերը ցրված են:

5. Պետք ե ձգտել ամեն որ թեկուզ փոքրիկ հաջողությունների (կարելի լե ասել՝ ամեն ժամ, յեթե հարցը մի քաղաքի մասին ե)՝ ամեն կերպ պահպանելով «բարոյական գերակօռությունը»:

«Համարձակություն, համարձակություն և մի անգամ ևս համարձակություն», Դանտոնի այս խոսքերը Մարքսն ու Լենինն իբրև նշանաբան ելին դնում զինված ապստամբության համար: Իսկ մայիսմեկյան ապստամբության ժամանակ հեղկոմի նշանաբանն եր՝ անվճռականություն, անվճռականություն ու անվճռականություն:

Ինչպես արդեն ասված ե, մայիսյան ցույցից անմիջապես հետո կայծակնահար յեղած Դաշնակցությունը սկսում է հազճեպ կերպով հավաքել իր ուժերը: Պարլամենտը ցրվում ե, ամբողջ իշխանությունը հանձնվում ե դաշնակցական բլուրոյին, վորն ահազանգ է տալիս. «Հայրենիքը վտանգի մեջ ե», հայտարարում ե դաշնակցական կուսակցության անդամների զորահավաք՝ սպառնալով զորահավաքից խուսափողներին տերըրի լենթարկել:

Միաժամանակ շարժման մեջ և դրվում ստի ու լուսանքի փորձված ապարարատը։ Ապստամբության զինվորների վրա թափվում և զրպարտությունների ու ցեխի մի հեղեղ, Խորհրդավին Ռուսաստանն ու Աղըրեջանը պատկերացվում են իրեւ հայակերճիվաղներ։ Նորից պահեստից հանվում և թյուրքական վըտանգի խրտվիլակը, Աղըրեջանի վերջնագիրը Զանգեզուրի ու Ղարաբաղի մասին ներկալացվում և իրեւ «Կարմիր մորթի հագած մուսավաթիստների» «հայացինջ» քաղաքականության արտահայտություն։

Մենք գտնում ենք միանգամայն անհիմն ընկ. Աշոտ Հովհաննիսյանի «գժգոհությունը» ընկ. Որջոնիկիձելի և Խ. Աղըրեջանի կառավարության վերջնագրից։ Դաշնակցական կառավարությունը չիթե Խ. Աղըրեջանի ինքնապաշտպանության տեսակետից այդ վերջնագիրն անհրաժեշտ եր, իսկ դա չի ժիտում նույնիսկ Ա. Հ.-ը, ապա դժգոհել նրանից, վոր այդ վերջնագիրը դաշնակների ձեռքին իրեւ գենք հանդիսացավ, կնշանակի հայտնաբերել տարրորինակ միամըտություն։ Կարծես, լեթե չլիներ այդ վերջնագիրը, յեթե նույնիսկ Խորհրդավին Ռուսաստանը մեղք ու կաթով խոսեր դաշնակ կառավարության հետ, վերջինը չեր հորինի նորանոր առասպելներ ու պոչավոր ստեր՝ նույն Ռուսաստանը վարկարեկելու և իր յերկրում բռնկված շարժումը ճնշելու համար։ Կարծես թե բուրժուազիան անփորձ և այլպիսի գործերում. յերբ նրան հարկավոր ե, նա կարող է ստեղծել այնպիսի ստեր, վորոնց առաջ կնսեմանան ամենախիստ վերջնագրերը։ Բավական և հիշել փետրվարին հենց դաշնակների կողմից հորինված «կացինների» հեքիաթը,

կամ ոռւս բուրժուազիայի վայնասունը «կանանց աղւպախացման», «գողերի ու ջուդների թագավորության» մասին և այլն, ել չխոսենք այսոր ամբողջ աշխարհում խոշոր արտադրական հիմունքներով դրված այն ձեռնարկումների մասին, վորոնք բացառապես հակախորհրդական կեղծ փաստաթղթեր են արտադրում կապիտալիստական պետությունների պատվերներով...

Զարմանալի՛ միտմառություն...

Դաշնակ կառավարությունը կամենում եր ահարեկել քաղքենուն ու գլուղի կուլակին, վախեցնել թյուրքական վտանգի ճիշվաղով միջակ գլուղացուն, ինչ միջոցներով ել լինի. Սրա հետ միասին նա սպառնում եր յերկրի աշխատավորությանը սովի ո-րվականով: Ահա թէ ինչ եր գրում նա ապստամբության վերջին որը.—

«Կառավարությունն արդեն ստացել ե նախագուշացում գնդ. Հասկելից և վրաց կառավարությունից, վոր յեթե Հայաստանում բայլշեկիկան շարժումները չդադարեն, Հայաստանի համար Բաթում հասած 680,000 փութ ալլուրը և ուրիշ մթերքներ չեն ուղարկվի... Ամերիկյան կոմիտեն սկսել ե կրծատել իր վորբանոցները և տեղ-տեղ արդեն արձակել ե հարյուրավոր վորբեր..»:

Ուրիմի, խոնարհվիր նորից, բանվոր, զինվոր ու գլուղացի, թե չե սովի վոսկրոտ մագիլներն ու մառների կոթը կհնազանդեցնեն քեզ: Հանուն ինչի՞ Հանուն...

«Հայաստանի կառավարությունը, ինչպես միշտ, այսոր ել նույն հետեղականությամբ կշարունակե պաշտպանել միացլաւ և անկախ Հայաստանի իրակա-

նացման գործն ու դեմոկրատիկ կարգերի ամրապնդումը... Յեվ պիտի անխնա հոշոտվեն բայլշեկները, «այդ մարդիկ», վորոնք...

«Միքանի վաճառված սլինների վաճառված կամքը ցանկացան թելադրել մեր յերկրին և ընդմիշտ խորտակել դարերի ու սերունդների պայքարի գնով փրկված Հայաստանի անկախ պետականության սքանչելի նավակը...»\*):

Նեխված դիակներով լեցված ու մահաբեր միջատներով վխտացող դաշնակցական մութ ու խոնավ բանտը «սքանչելի նավակ» պիտի յերևակայելին յերկրի աշխատավորները։ Իսկ վժըն եր Խորհրդավորն Ռուսաստանի այն պատկերը, վորը հրամցվում եր դաշնակների կողմից։

«Բոլշևիզմի հյուծախտով տառապող Ռուսաստանը ճգնաժամային որեր ե ապրում... ավերված հայրենիք, նողկալի չքավորություն, բարքերի այլասերում, կախաղանների անվերջ շարքեր, արյան հեղեղներ... յերրեք ու վոչ մի քաղաքակիրթ աշխարհում Սովորապիտայի բռունցքի ու սվինի պաշտամունքն ավելի վայրագ ձեւեր չընդունեց...»։

Այս յուրօրինակ ազիտացիալով հանդերձ՝ Դաշնակցությունն ուշադրությունն ու յեռանդը դարձրել եր ապստամբությունը զինված ուժով ճնշելու վրա։ Մառազերիստներից ու կամավորներից կազմված մի զորամաս, վորին միացվել ելին նաև կանոնավոր բանակի միքանի մասեր, Սեպուհի գլխավորությամբ, Ալեքպում դեռ խորհրդավորն իշխանություն չհաս-

\* ) «Հառաջ», 14 մայիսի, 1920 թ.։

տառված, ճանապարհ եր ընկել Յերևանից հեղափոխական շարժումը խորտակելու: Սակայն այդ եքսպերիֆիայի մի խոշոր մասը միանգամայն անհուսալի յեր դաշնակների համար: Առաջին իսկ ընդհարման բոպեյին կանոնավոր բանակի զինվորները կանցնելին կոմմունիստների կողմը կամ կըրվեյին. դասալքությունը ճանապարհին ահռելի չափերի յեր հասնում: Մնում եյին Սեպուհի խումբը և կամավորները, թվով ընդամենը միքանի հարյուր հոգի, սակայն սրանք ևս անկարող կլինեյին դիմադրել կանոնավոր զորքին:

Դանդաղ առաջ շարժվելով՝ Սեպուհի եքսպերիֆիան մայիսի 13-ին արդեն Ազինի շրջանումն եր:

\* \* \*

Ամեն մի կորցրած որ և նույնիսկ ամեն մի կորցրած ժամ ծանր հարվածներ եր բերում հեղափոխության համար: 12-ին ընկավ Ղարսը, նույն որը յերկաթուղում աշխատող դաշնակների մի խումբ, Զաջուռի կուլակների հետ, քանդել ելին Ղարաքիլիսայի յերկաթգիծն ու փակել տոննելը. գերեզմանատան և կաղազի պոստի ռայոնում դաշնակցական խմբերը կազմակերպվում ելին և պատրաստվում: Մայիսի 13 ին ցերեկով մառզերիստները ծանր վիրավորեցին կայազորի պետ գեներալ Խաչատրյանին, վորը հետեւալ որն իսկ մեռավ:

Իսկ ուղմ-հեղափոխական կոմիտեն դեռ ճգնում եր խաղաղ կերպով ավարտել հեղաշրջումը: Բանվորների կողմից ձերբակալություններ կատարելու փորձերը հանդիմանվում ելին: Ապստամբության ընթացքում մի դաշնակ եր միայն բանտարկվել և նրան ել

աղատ եյին արձակել, ներողություն խնդրելով։ Ամսի  
13-ին զրահագնացք եր յեկել հայտնի խմբապետ Սըմ-  
բատը՝ առաջարկելով իր միջնորդությունը։ Մի պատ-  
վիրակություն՝ բաղկացած դաշնակներից, մենչեւիկնե-  
րից ու եսերներից ուղարկվել եր Սեպուհի հետ բա-  
նակցելու։ Այդ քայլը ուսակցիան դիտում եր, ընակա-  
նորեն, վորպես սազմ-հեղկոմի թուլության ու հեղա-  
փոխական ուժերի քայլաման նշան։ Սեպուհը կտրա-  
կանապես հրաժարվելով բանակցություններից՝ առա-  
ջարկում և անձնատուր լինել

Այսպիսի դրություն եր ահա, յերբ 13-ի յերեկո-  
յան հեղկոմը հրավիրեց կուսկազմակերպության ղեկա-  
վար ընկերների խորհրդակցությունը, վորտեղ ներկա  
ելին 26 հոգի։ Յերկու տրամադրության հակադիր տե-  
սակետներ արծարծվեցին այդտեղից Ընկերների մի  
մասը, գլխավորապես այն ընկերները, վորոնք սկըզ-  
բեց բացասական դիրք եյին բռնել դեպի ապստամ-  
բությունը և անցլալում շարունակ պաշտպանել եյին  
Արմենկոմի վարքագիծը, առաջարկում եյին անմիջա-  
պես լուծարքի յենթարկել ապստամբությունը և  
քայլեր անել՝ ստեղծելու կոալիցիոն կառավարություն և  
մենակերպեցրի յեվ զաօնակների հետ... Մյուս տեսա-  
կետը յերկաթուղարին ընկերներինն եր, վորոնք, սուր  
կերպով քննադատելով հեղկոմի անզործունելությունը  
և տարտամ քաղաքականությունը՝ պահանջում ելին  
անմիջապես ցրել կարմիր-գվարդիականներին բանա-  
կի մեջ՝ նրա մարտական վոզին բարձրացնելու նպա-  
կով և լուսաբացին ընդունել կափվը Սեպուհի հետո  
Յերկար ու տաք վիճարանություններից հետո ընդուն-  
վեց յերկաթուղարինների առաջարկը և հանձնվեց

հեղկոմին ի գործադրություն։ Բնորոշ ե, վոր հեղկոմի ներկայացուցիչ Ավիսն այդ խորհրդակցության ընթացքում վոչ մի խոսք չասաց։

Ռազմ-հեղկոմը շտաբի (հիշենք Ղորղանյանին) տված պանիկալին տեղեկությունների հիման վրա, քննելով ստեղծված կացությունը, ձայների մեծամասնությամբ (դեմ ելին ինդել մի յերկու բանվոր և մի յերկու հոգի յել ձեռնպահ ելին մնացել) վորոշում և նահանջի ճանապարհը բռնել։ Մակայն շտաբի ստեղծած խուճապն անհնար եր դարձրել կազմակերպված նահանջը։ Զորքը դիրքերից հանվիլ եր և վերադարձվել զորանոցները։

### Մնացածը հայտնի է։

Կարող ելինք արդյոք հաղթել մենք ամսի 13—14-ին։ Ո՞ւշ չեր արդյոք։ Մեզ թվում ե, վոր ուշ չեր։ Ճիշտ ե, անասելի դժվարություններ ելին կուտակվել մեր առաջ, շնորհիվ կորստարեր հապաղումների, բայց և ալնպես թե բարոյական, թե ռազմական գերակըշությունը մեր կողմն եր և յեթե ռազմ-հեղկոմը գոնե այստեղ հայտնաբերեր մի փոքր ավելի վճռականություն, հենվելով բանվորների պողպատե պատրաստակամության վրա, խրախուսելով նրանց միջոցով բանակայիններին, չեզոքացնելով զինվորների դժգոհություն առաջ բերող ռեակցիոն սպաներից թեկուզ միքանիսին, զրահազնաբաթի ոգնությամբ մենք կարող ելինք հեշտությամբ ջախջախել Սեպուհի խումբը, վորը կքայքայվեր ու բարոյապես կպարտվեր առաջին իսկ խոշոր ընդհարումից, իսկ հետո։ Հետո քաղաքացիական կոիվ, ավելի համառ ու ավելի յերկարատե, քան յեթե ռազմ-հեղկոմը սկզբից ևեթ դիմեր վճռական

գործողությունների, բայց և այնպես հաղթանակը հեռու չեր լինի: Ուրիշ ուեալ ուժ, բացի Սեպուհի խըմքից, դաշնակցական կառավարությունը չուներ հեղափոխությանը հակադրելու համար: Ցեղ նույն Սեպուհն և, վոր մեկը մյուսի յետեկից ճնշում և զանազան գավառներում բռնկված ապստամբությունները:

Ալեքպոլիս անկումը շարժման ճգնաժամալին մոմենտն եր, վորից հետո ապստամբական շարժումները Հայաստանի զանազան մասերում այլևս շանսեր չունեյին հաղթելու, վորովհետև շրջաններից և վոչ մեկը չուներ այն նշանակությունը և չեր կարող մի այնպիսի կոնտակտ ուժ հանել հականեղափոխության դեմ, ինչպես Ալեքպոլը: Վորքան ել լավ ու ճիշտ լիներ զեկավարությունը Սարիղամիշում, Նոր-Բայազետում և Դիլիջանում, առանց այն բնական կենտրոնի, վորպիսին հանդիսանում եր Ալեքպոլն ապստամբության համար՝ թե իր աշխարհագրական, թե քտզաքական դիրքով, նրանք չեցին կարողանա այլևս հաղթել ու ապահովել խորհրդացին իշխանության անմիջական հաստատումը Հայաստանում:

Ընկերներից վոմանք կարծում են, վոր յեթե ապստամբությունն սկսվեր Դիլիջանից, նա անպայման կհաղթեր: Ավելորդ ե ասել, վոր ճիշտ ուղղությունը, մարշրուտը դեռ չի ապահովում հաղթանակը: ամենազլիսավորը ճիշտ տակտիկան ե: Բացի այդ մենք գտնում ենք, վոր մայիսին ապստամբությունը Դիլիջանից սկսելը կլիներ և քաղաքական, և ռազմական սխալ: Նա պես և սկսվեր Ալեքպոլից, վորովհետև 1) այսպիսով հնարավոր եր ստեղծված հեղափոխա-

կան՝ տրամադրությունն ոգտագործելով՝ խուսափել ձգձգումներից և արագորեն հարձակվել Յերևանի վրա, 2) կտրվում եր դաշնակների կապը Վրաստանի հետ, 3) նրանք զրկվում ելին յերկաթգծից, 4) Ալեքպոլն ապահովում եր Հարսն ու Սարիղամիշը և հնարսավոր գարձնում դաշնակներին ողակել, 5) Դիլիջանից Յերևանի վրա հարձակվելու գեպքում Ալեքպոլն ապահովում եր թիկունքը, 6) ուժեղ ու ակտիվ կուլակություն ունեցող Յերևանի ու Եջմիածնի վրա հնարսավոր եր դառնում շարժվել միանդամից յերկու ուղղությամբ, 7) Ալեքպոլում կենտրոնացած ելին խոշոր զինվորական ուժեր, վորոնք վճռական նշանակություն կունենային, 8) Ալեքպոլի քաղաքական նշանակությանը դաշնակցական Հայաստանում շատ ավելի մեծ եր, քան Դիլիջանինը և այլն և ալին:

Գուցե առարկեն, թե նոյնմբերին մեզ հաջողվեց Դիլիջանի վրայով անցնել ու խորհրդալնացնել Հայաստանը: Ճիշտ ե, բայց նոյնմբերին չկային արդեն վոչ Ալեքպոլը, վոչ հլ Ղարսն ու Սարիղամիշը: Բացի այդ, նոյնմբերին դասակարգալին հարաբերությունները յերկրի ներսում այլ ելին: Յեթե մայիսին միջակ գլուղացիությունն իր խոշոր մասով լոկ համակրում եր մեզ, իսկ կուլակությունն ակտիվ պայքարում եր մեր դեմ, նոյնմբերին միջակ գլուղացին անձկությամբ սպասում եր կ մմունիստներին իրրե ֆրկարաների, և ամենուրեք ակտիվ կերպով ոգնում միզ. իսկ կուլակությունը, տաճկական վտանգի սպասնալիքի տակ, չեզոք դիրք եր բռնել: Փետրվարին նա անցավ ակտիվ գործողությունների մեր դեմ, սակայն նոյնմբերին նա չեղոքացվել եր, և մեր առաջխաղացումը չհանդիպեց դիմադրության:

\* \*

Մայիսի վերջերին Հայաստանը «խաղաղվեց»։  
Տասնյակ ու հարյուրավոր բանվորներ, գյուղացիներ  
գնդակահարվեցին, մորթոտվեցին Սարիղամիշի, Նոր-  
Բալազետի, Ղաղախի, Ալեքպոլի, Ղարսի ձորերում ու  
լեռներում։ Շարժման այն դեկավարները, վորոնք ըն-  
կել եյին դաշնակ հրոսակների ձեռքը, սպանվեցին։  
Խմբապետական ռեժիմն անողոք եր հանդեպ նրանց,  
վորոնք հանդգնություն ելին ունեցել կանչելու Հա-  
յաստանի բանվորությունն ու աշխատավոր գյուղա-  
ցիությունն ազգամիջյան կոտորածների կոշմարից դե-  
պի միջազգային համերաշխությունը, գաղութացին  
խայտառակ կախումից, կուլակի ու տղրուկի ճանկե-  
րից դեպի ազատությունը։ Բուրժուազիան լուծում  
եր իր դասակարգային վրեժը։

Գալիս և Զիշերինի նոտան, վորը մեղադրում է  
դաշնակ կառավարությանը կոմմունիստական ազըս-  
տամբությունը ճնշելու և կոմմունիստաներին գնդակա-  
հարելու մեջ։ Խորհրդավորն Ռուսաստանը հայտնում  
է, վոր անհնար և դրացիական հարաբերություններ  
ստեղծել մի իշխանության հետ, վորն ալզպիսի վայ-  
րագությամբ և վերաբերվում բանվոր դասակարգի  
ներկայացուցիչների հետ։ Դաշնակ կառավարությունն  
իր պատասխանի մեջ՝ Ոհանջանլանի բերանով հետե-  
վյալ ձեռվ և բնութագրում մայիսյան ապստամբու-  
թյունը։—

«...Շարժումը յերբեք կոմմունիստական բնույթ  
չի կրել, այլ դեկավարվել և մի խումբ հականեղափո-  
խական պաշտոնյաների և սպաների, նախկին կամա-

վորականների, գող ծառայողների և անխիղճ թալան-  
չինների կողմից, վորոնք ձգտում ելին անիշխանության  
ալիքների մեջ գտնել ապրուստի միջոց:

«Շարժման մեջ մասնակցում ելին անհատ կոմ-  
չմունխստներ, վորոնք անծանոթ եյին իրերի դրությա-  
նը և շարժման բնավորությանը, վորի մեջ նրանք վեր-  
ջում խոստովանեցին...»:

Ամեն ինչ սահման կարող ե ունենալ, բացի  
բուրժուազիայի լկտիությունից...

\* \* \*

Մայիսյան ապստամբությունը Հայոստանի բան-  
վորության և աշխատավոր գլուղացիության անդրա-  
նիկ սաղմական մկրտությունն եր քաղաքացիական  
կովի բովում: Նա բոնկվեց տարերաբնորեն, վարովհե-  
տե մեր կուսակցության ղեկավարությունը հանձին ս  
Արմենիան կոմիտի չե կարողացել (և նույնիսկ չեր կամե-  
ցել) նախապատրաստել մասսաները զինված ապօս-  
տամբության համար: Անշուշտ սա իր կնիքը դրոշմեց  
ապստամբության ընթացքի վրա:

Սակայն, այնուամենաւ յիշվ, մայիսյան ապստամ-  
բությունը կարող եր հաղթանակել, յեթե նրա ղեկա-  
վարությունն անհրաժեշտ վճռականություն ունենար  
և պողպատե ձեռքով առաջ տաներ այն: Ապստամբու-  
թյան ճանապարհին կուսակված դժվարություններն  
անհաղթելի չեյին նույնիսկ մալիսի 13-ին:

Կոմմունիստական կուսակցությունը վոչ միայն  
կարող եր վերցնել իր ձեռքն իշխանությունն ամբողջ  
Հայոստանում, այլև պահպանել այդ իշխանությունը:  
Վոչ արտաքին անբարենպաստ պալմանները (մենշե-

Գիւղան Վրաստանի պոլությունը), վոչ ել պարենալին դժվարությունների ճակատագրական նշանակություն չունենալին Առաջքություն Ռուսաստանի և Ազգրբեջանի ինքրարական ունտվամբ Հայաստանի պրոլետարիատի պհապանակին:

Անպրածեն ճեղաշրջման հույսերը բերին հասցրին պատամբության իր արյունոտ լեզքն: Արյան խընալությունը մայիսին ծանր ու թանգ նստեց հետագայում Հայաստանի աշխատավորության համար: Մեր հաղթանակը մայիսին, թեկուզ հարլուրավոր ու հաղարավոր զոհերի գնով, կազատեր լերկիրը ոեակցիայի ու պատերազմի արհավիրքներից, կփրկեր կորըստից հարյուր հաղարավոր մարդկանց:

\* \*

Մայիսի ապստամբությունը պարտվեց, բայց պարտվելով իսկ հարթեց հեղափոխության ճանապարհը, մասսաներն իրենց սեփական փորձով սովորեցին, թե ինչպես պետք և կովել խորհրդադին իշխանության համար, մեր կուսակցությունը կարողացավ հանել անհրաժեշտ լեզրակացությունները մայիսի դասերից:


Կոմմունիստները լերբեք չեն ծածկել իրենց սայթաքումները, մենք գիտենք քննադատել մեր սխալները, ստուգելով ու ճշտելով մեր վողջ վարքագիծն ամեն ժամ ու ամեն որ: Մենք քննադատում ենք ու դատապարտում մեր ընկերների մայիսին կատարած սխալները, նաև այն ընկերների, վորոնք ընկան խըմբագիտական խավարադեմ ոեակցիալի ձեռքից, ընկան վորպես բայլշնիկներ, վորպես հեղափոխության

արի ու անձնվեր մարտիկներ: Չնայած իրենց սխալ-  
ներին, նրանք մնացին մինչև վերջը մեր դասակար-  
դի հարազատ զավակներ, նրանք շարժվում եյին հե-  
ղափոխական պայքարի առաջին շարքերում և իրենց  
վրա կը ցին հակահեղափոխության առաջին հարված-  
ները: Յեվ մեր կուսակցությունը թույլ չի տա, վոր  
վորես մեկը փորձի անարգել ու սեացնել մալիսի  
պանծաւի մարտիկների հիշատակը: Նա թույլ չի տա,  
վոր վորես մեկը, դաշնակներին ձայնակցելով, փորձի  
պախարակել մայիսյան ապստամբությունը, այն հո-  
լակապ ու հսկա շարժումը, վորը հիմքից ցնցեց դաշ-  
նակ պետականության շենքը:

Չնահատելով ապստամբության անմիջական ղե-  
կավարության սխալները՝ չմոռանանք վոր՝

Ավելի հեշտ ե գրել ապստամբության մասին,  
քան ղեկավարել ապստամբությունը:





ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0045751

(254.)

A I  
8677

Т. МАНДАЛИН

# Майское восстание



ФИЧЕР 20 ч.